

Մ. 192 422

Վ 3


ԲՓ. Ա. ԲՈՒԴՐՈՒԹԵԱՆ.

Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ն

Թ Է

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

(Երկրագործական աշխատանքը, իրրե հիմք ժողովրդի
բարեկեցութեան և առողջութեան)։



Ա.ՊԵՏՐՈՎԻՆԴՐՈՎ

«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ» ԱՐԵՎԱՏՏԻՎ ՏՊԱՐԱՆ

1904.

16439

Дозволено цензурою. С.-Петербургъ, 16 Января 1904 года.



31-2068

„Пушкинская Скоропечатня“, Лештуковъ 4.

Մեր շուրջը եռացող կեանքը իւր բոլոր կողմերով կարօտ է անրնդհատ լուսաբանութեան։ Ամեն կենդանի խօսք օգաակար է մեզ։ Մենք ամեն կողմից յետ ենք մնացել։ Մեր շուրջը խաւար է, անթափանցելի խաւար. թէև արեր և լոյս է տալիս, և չերմութիւն։

Սակաւահողութիւնը, անհողութիւնը, պարբերական անբերբիութիւնը, սովու ու զանազան հիւանդութիւնները ստիպում են մեր գիւղացուն թողնել և պանդխտել քաղաքները, որտեղ նրանք ուղղակի կորչում են։

Քաղաքները չեն օգնում, կամ շատ քիչ են օգնում այդ խեղճ աշխատաւորներին։

Գիւղացիների մեծ մասը մտնում է գործարան. և նրա թշուառ գրութիւնը հետզհետէ աւելի ժանը, աւելի թշուառ կերպարանք է ստանում։

Մեղանում՝ թէ քաղաքում և թէ գիւղում միւնոյն խաւարն է տիրում, ամեն տեղ նոյն անկանոն կեանքն է իշխում, ամեն տեղ նոյն կենսակրթութեան (կուլտուրա) բացակայութիւնն է նկատում։

Եւ ճիշտ որ, բաւական է մարդ մի՛ անդամ անցնի քաղաքի կամ գիւղի փողոցներով, որ խկոյն ամեն քայլափոխին տեսնի, թէ որքան գործեր կան

երեսի վրա թողած, որքան բարեփոխութիւններ են
հարկաւոր մեր կեանքին:

Ահա ձեզ մի հասարակական տնտեսութիւն,
որի դեկավարները գումարներ են հաւաքում, բայց
շատ շատերը սնափառութիւնից ու անձնական
օգուտից դուրս ուրիշ բանի վրա չեն մտածում:

Ահա ձեզ մի զրադարձ, որաեղ ամեն ինչ
խառնիխուռն է, անկարգ ու աչքաթող արած,
և որաեղ անօգուտ են անցնում թէ փողը, թէ
զրբերը:

Ահա ձեզ մի փողոց, որից առանց զգուանքի
անցնել չի լինում, այնքան կեղառութիւններ կան
թափուած. օղը վարակող կեղառութիւններ:

Ահա եկեղեցիներ, մեծ մասամբ դասարկ. ու-
սումնարաններ չկան կամ շատ քիչ են... Ո՞րն ասես,
որը թողնես:

Դժբախտաբար մեր Երկիրն ասլրում է մի կերպ,
եօլա է գնում այդ վիճակում. մեր ժողովուրդը չի
մտածում ույդ ցաւալի գրութիւնից դուրս գալու
մասին: Պարզ է ի հարկէ, որ այդպիսի զրութիւնը
վերջիվերջոյ հասցնելու է վասասերման ու վաղա-
ժամ մահացման:

Դարերով պահպանած մեր ինքնուրոյնութիւնը
գեռ մնացել է զիւղում, բայց այդ ինքնուրոյնու-
թիւնը չի համապատասխանում ժամանակի ոգուն:
Պէտք է բարեկարգել նրան:

Պէտք է բարձրացնել գիւղն ու քաղաքը բարոյ-
ապէս ու անտեսապէս: Կը բաւականա՞ն արդեօք
մեր ունեցած ոյժերը այդ դորձը դլուխ բերելու

համար, թէ ոչ, մենք այդ չղիտենք. բայց աշխատել պէտք է:

Որտեղ էլ լինի, երբ էլ լինի և ուժ ձեռին էլ որ լինի հողը միշտ կպահպանէ իւր աղնուացնող նշանակութիւնը, միայն հարկաւոր է, որքան կարելի է լաւ շահագործել նրան: Նա շատ անդամ չնչին արդիւնք է տալիս, ոչ թէ բնականից անպառուղ լինելու պատճառով, այլ որովհետեւ նահապետական ձեռվ է մշակում և զրանով ուժասպառ է լինում:

Անհրաժեշտ է աշխատանքն աւելի եռանդուն և ազբարնակութիւնը աւելի դորձքնդունակ գարծնել. այդ նպատակին հասնելու համար հարկաւոր է, որ ժողովուրդը տեսնի դիտութեան շօշափելի արդիւնքը և հասկանալ, որ նրա շնորհիւ կարելի է աւելի մեծ հետեւանքների հասնել:

Ահա թէ ինչպէս, ինչ միջոցներով մենք կարող ենք ժողովրդի մէջ աշխատասիրութիւն ստեղծել և յարգանք առաջ բերել դէպի ուրիշի սեպհականութիւնը:

Հարկաւոր է, որ ամենքս աշխատենք հանրօղուտ դիտութիւնները տարածել ժողովրդի լայն խաւերում: Հարկաւոր են դիւղատնտեսական, տեխնիկական արհեստաւորական ուսումնարաններ, 4—6 դասարանով. հարկաւոր են հարիւրաւոր տարրական ուսումնարաններ՝ գրադիտութիւն տարածելու համար:

Մեր ժողովրդի մեծագոյն մասը գիւղացիներն են, սիրում են հողն ու արհեստը. մեր ամբողջ աղգաբնակութեան $95^{\circ}/_0$ -ը հողագործ է. քաղաքներում $90^{\circ}/_0$ -ը արհեստաւոր է: Եւ բոլորն էլ ուսման

կողմից շատ յետամնաց են, հարիւրից մէկն է միայն
ուսումնարան գնում:

Մեզ անհրաժեշտ է ներքին ինքնավարութիւն
(զեմստիօ), որի կարիքն ամենքն դդում են: Ազգա-
բնակութեան բաղմացեղութիւնը դրան խանգարել
չէ կարող, որովհետեւ Տաւրիկեան, Բևսարաբիալի և
Կաղանի նահանգներում էլ ապրում են բաղմացեղ
աղջեր, բայց այդ հանգամանքը երբեք արդելք չէ
լինում, որ զեմստիօները իրանց օդակար զերը
կատարին:

Կրկնում ենք, զիւղական աղջաբնակութիւնը
շատ մեծ նշանակութիւն ունի ընդհանուր շահերի
տեսակէտից, և նա իբրև մէժամասնութիւն կարօտ է
առանձին հոգատարութեան:

Իսկ դործարանի բանւորները համեմատաբար
սակաւ նշանակութիւն ունին ներկայ պայմաններում,
որովհետեւ նրանք իրանց աշխատանքի տէրը չեն
և ապահովութիւն չունին այսօրուայ, վաղուայ,
սև օրուայ և ծերութեան համար:

Ի՞նչ օգուտէ տալիս մեր զիւղացուն դործարանը:
Երկար տարիներ դործարանում աշխատելուց յետոյ՝
ուժասպառ ու հիւանդոտ թողնում է քաղաքը,
եթէ կենդանի է մնացել, ու վերադառնում է զիւղ՝
դատարկ սրտով և նոյնքան դատարկ գլխով ու
դրապանով:

Մեր զիւղացիները խարխափում են տղիտու-
թեան, խաւարի մէջ և շատ անդամ զոհ են գնում
կարիքի հարուածներին: Գործարանը դեռ ցանկալի
բարձրութեան չէ հասած, որ նրանց վերաբերմամբ

փրկարար դեր կատարէ, ուստի հարկաւոր է շօշափելի օգնութիւն հասցնել այդ աշխատաւոր դասին:

Որտեղ որ ուսումնարան չկայ, և նոյնպէս կիրակնօրեալ, թող իւրաքանչիւր մարդու պարձանքներից մէկը լինի այն, որ նա իւր կեանքում դոնէ երեք մարդու սովորեցնէր մայրենի լեզուով կարդալ ու դրել և յօդուա մերծաւորներին ժառայեցնէր իւր սովորածր: Ժամանակը ոսկուց թանգ է:

Հիմնուելով վերջին 8-10 տարուայ մեր և ոռւս լրագրութեան տեղեկաւթիւնների վրա, մենք ընդհանուր կերպով ցուց կտանք այստեղ բազարների բանւոր աղջարնակութեան դրութիւնը և գործարանի աղջեցութիւնը դրանց վրա, և ապա կանցնենք այն հարցին, թէ որքան մեծ հշանակութիւն ունի հողը և համաշխատակցութիւնը՝ կօօպերատիւ գործունեութիւնը:

Ա.

Յայտնի է, որ գործարանի բանւորները դլխաւորապէս երկրագործ դասից են վուրս գալիս. հոգեւոր դասից ելածները բացառութիւն են կազմում, իսկ բաղաքացիք (մեշանին) բանւորների մի աննշան մասն են կազմում: Այսպէս ուրեմն գործարանի հետ կապուած են հողից կտրուած դիւղացիներ:

Ամենազլիսաւոր պատճառը, որ խլում է երկրագործին իւր հողից՝ բանւոր դարձնելու համար— ձեռքի աշխատանքից մեքենական աշխատանքին անցնելն է: Այն բանւորները, որոնք առաւելապէս ձեռքի աշխատանք ունին, և որոնց գործում մեքենան

երկրորդական զեր է խաղում, ամառն աւելի երկար ժամանակով են գործը թողնում ու գնում իրանց դաշտային աշխատանքներին, քան թէ այն բանւորները, որոնք աշխատում են մեծ գործարաններում:

Փոքրիկ գործարանները, որոնք մօտ են տնալնագործութեան սահմանին, այնպիսի հիմնարկութիւններ են, որտեղ բանւորները կատարում են իրանց զլխաւոր պարագմունքները, դաշտային աշխատանքները վերջացնելուց լետոյ, և հարկաւոր դէպում միշտ դիւդն են վերադառնում. բայց հենց որ այդ գործարանը աւելի մեծ չափեր է ստանում, հենց որ նկատում է խոշոր կապիտալի ազգեցութիւնը, բանւորները այլ ևս ամառները զիւղ չեն գնում. նրանք կապւում են գործարանի հետ:

Գիւղացուն հողից բաժանելու համար, բանւոր վարձողները վիմում են ստիպողական միջոցների, որոնք վարագուրուած են կամ պարզ երևում են պայմանագրերի մէջ: Բանւորները, օրինակ, իրաւունք ունին ձմեռը գիւղ գնալու. բայց ամառը գնալիս՝ զրկւում են վարձից:

Գործարաններին կից բանւորների համար բնակարաններ շինելը նոյնպէս օդնում է բանւորների հողից ու գիւղից կարուելուն: Բնակարաններ չինելը խանգարում է եկւորին իր կնոջ ու երեխայի աշխատանքը ժախելու, բայց այն տեղերում, որտեղ առանձին շինութիւններ կան բանւորների համար, նրանք հնարաւորութիւն ունին ընտանիքը գիւղից գործարան փոխագրելու:

Գործարանատէրերին այդ ձեռնառու է և նրանք

խրախուսում են ամեն կերպ բանւորներին, որովհետեւ
այդպիսով հնարաւորութիւն են ստանում նրանց
կանանց ու երեխաների էժան աշխատանքից ել
օգտուելու:

Քանի որ բանւորը գեռ մենակ է զործարանում,
իսկ ընտանիքը զիւղումն է, կայ գեռ մի մազնիս,
որ նրան զիւղ է բաշում. ժամանակ ժամանակ
նա զիւղ է վերադառնում, դաշտի աշխատանքներն
անելու համար:

Բայց զործարանատիրոջ ձեռնտու է բանւորին
հողից խլելը և նրա ընտանիքի էժան աշխատանքից
օգտուելը: Միւս կողմից ընտանիքը, որ զրկուել է իւր
հողը մշակող անդամից, տնկարող է զիւղում ապրել:

Փոքր վարձագինը հնարաւորութիւն չէ տալիս
բանւորին իւր ընտանիքը զիւղում սպահելու, և նա՝
ստիպուած՝ բերում է կնոջն ու որդիներին զործարան,
վերջնականապէս իւր կապը կտրելով զիւղից և որդի-
ներին դարձնելով զործարանի իսկական բանւորներ:

Բ

Այսպէս ահա, զործարանական լայն արդիւնա-
բերութիւնը նկատելի միտումներ ունի երկրագործ
գասին հողից կտրելու:

Ի՞նչ բարելաւութիւն է մտցնում զործարանը
զիւղացու կեանքի մէջ, որին խլել է հողից և
գարձրել է զործարանի բանւոր: Այդ հարցը կարելի
է երկու կողմից քննել. նախ ի նկատի ունենալով
բանւորի աշխատանքի լարումը և զրա հետ կա-

պուած նիւթական բարեկեցութիւնը, և երկրորդ՝
այն բարոյական պայմանները, որոնք շրջապատում
են բանւորին գործարանում:

Տնաեսական, առողջապահական և բարոյական
տեսակէտից բանւորի համար շատ մեծ նշանակու-
թիւն ունի այն հարցը, թէ որքան է աշխատում
նա, թէ ինչ չափով են լարւում ու մաշւում նրա
ոլժերը: Աշխատանքի որքանութիւն ասելով, պէտք է
հասկանալ նրա տեսողութիւնը և սրան զուգընթաց
բոլոր կողմնակի պայմանները, օրինակ աշխատանքի
առողջապահական պայմանները:

Առողջապահական դիատութիւնը մեզ չի տալիս
աշխատանքի քանակութեան համար որոշ չափ, և եթէ
նկատողութեան առնենք այն բազմաթիւ, յանախ
աննկատելի պայմանները, որոնցից կախուած է
այդ չափը, այն ժամանակ կտեսնենք, որ չի էլ
կարող տալ:

Ուստի այն բոլոր դատողութիւնները, որ
լինում են զործարանական աշխատանքի ոլժից վեր
լինելու և նրա չափի փոքրացնելու մասին, մասսամբ
միայն հիմնուած են առողջապահական պա-
հանջների վրա. յանախ այդ դատողութիւնների
հիմքը բարոյական հասկացողութիւններ են լինում.
օրինակ ասում են թէ անհրաժեշտ է բանւորին ազատ
ժամանակ տալ իր մտաւոր ու բարոյական պա-
հանջները գոհացնելու, իւր բնաւանիքի մասին հոգա-
լու և այլն:

Գործարանական բանւորի աշխատանքի լա-
րումը չափելու համար կարելի է վերցնել այն

թուերը, որոնք ցուց են տալիս, թէ որքան օր է աշխատում նա մի ամսուայ կամ մի տարուայ ընթացքում:

Տօն օրերի թիւը մեր գործարաններում շատ տարբեր է. եթէ չխօսենք այն տեսակ դէպքերի մասին, երբ գործարանը մէկ, երկու կամ աւելի ամիս ընդհատում է իւր գործը, տօն օրերի թիւը տատանւում է 96-ի և 126-ի սահմաններում: Իսկ եթէ խօսելու լինինք աշխատելու օրերի մասին, այն ժամանակ կտեսնենք, որ մեր գործարաններում նրանք մի ամսում $22\frac{1}{2}$ -ից այն կողմը չեն անցնում:

Մի խիստ աչքի ընկնող տարբերութիւն կայ աշխատանքի օրերի բանակութեան միջև այն գործարաններում, որտեղ արդիւնաբերութիւնը ձեռքի աշխատանքով է լինում և այն գործարաններում, որտեղ համարեա ամեն բան մերենան է կատարում:

Առաջին տեսակի գործարաններում եղած տօն օրերի շատութիւնը կարելի է վերազրել այն բանին, որ այնտեղ աշխատողների մէծագոյն մտար տեղայիններ են, որոնք դեռևս աւելի կամ պակաս չափով կապուած են հողի հետ: Այդ կարգի գործարանը ստիպուած է հաշուի առնել տեղական սովորութիւնները, մինչդեռ խոշոր մերենաներով լի գործարաններում այդ բոլորը արհամարհանքի է մատնւում:

Բանւորները աշխատում են օրական 12-14 ժամ, այսինքն միջին թուով 13 ժամ: Այստեղ մենք մի փոքր կանգ կառնենք մեր գործարաններում եղած դիշերուայ աշխատանքի վրա:

Գիշերուայ աշխատանքին մենք հանդիպում
ենք արդիւնագործութեան զլխաւոր ճիւղերում.
մի տեղ նա սովորական է և արդիւնաբերութեան
հիմքն է կազմում, մի այլ տեղ բանւորների աննշան
քանակութիւնն է փոխառփոխ բանում զիշեր-ցերեկ,
մի ուրիշ տեղ զիշերուայ աշխատանք չէր լինի, եթէ
աշխատանքը երկարատեւ չլինէր և աւելի կանոնա-
ւոր բաժանուէր օրուայ 24 ժամերի ընթացքում:

Ինչ ձեռով էլ լինի, զիշերուայ աշխատանքը
չափազանց վնասակար է: Այդ հարցն այնքան ան-
դամ և այնպէս հանգամանօրէն քննել են տնտե-
սագէտներն ու առողջագէտները, որ վիճելը միան-
գամայն աւելորդ է:

Եթէ մինչեւ այսօր գեռ այնքան զօրեղ ու
եռանգուն չեն հնչում այդ աշխատանքի ձեր վերացնել
պահանջող ծալները, պատճառն այն է, որ նշմար-
տութեան լոյսը ճնշում և ծածկում է ամենազօր
կապիտալի և նրա ստեղծած կարգերի քողի տակ:

Մնում է միայն այստեղ ցոյց տալ թէ ինչ
պակասութիւններ ունին, միմեանց համեմատու-
թեամբ, զիշերուայ աշխատանքի տեսակները, որոնք
պատահում են մեր գործարաններում:

Փոխառփոխ, հերթով կատարուող աշխատանքի
ամենավատ տեսակը, անկասկած, այն է, որ բան-
ւորներն ամենաքիչ հնարաւորութիւն ունին իրանց
սպառած ոյժերը վերականգնելու: Դա կարնատե-
ներթերի սիստեմն է: Պակաս վնասակար չէ նաև
երկարատեւ հերթը, 12 ժամ տեսողութեամբ:

Կարճատեւ կարող է համարուել 6 ժամ տեսող

հերթակալութիւնը։ Գործարանում աշխատելով 6 ժամ, օրինակ ցերեկը 6—12-ը, բանւորը մնացած ժամանակի մի մասը պէտք է գործադրէ ուտելու, ընտանեկան մանր հոգսերի և նման բաների վրա։ Նրա իսկական հանգստութեան՝ քնելու համար կմնայ միայն 3-4 ժամ։

Բայց այդ կարճատև քունը գործարանի՝ դօրանոցի նման շէնքերի՝ ծանր ու խեղփիչ մթնոլորտում, միթէ կարող է վերականգնել նրա անքնութիւնից մաշուած կորուսաները։

Հերթից կէս ժամ առաջ գործարանի սուլիչը, պահապանների թխկոցն ու համոզումները նրան ստիպում են վեր կենալու և հերթակալութեան պատրաստուելու։ Վեց ժամ աշխատելուց յետոյ՝ զիշերուայ ժամի 12-ին նա դառնում է առւն և նորից մի կերպ պառկում է քնելու։

Հետեանքն այն է լինում, որ բանւորը աշխատում է որքան կարելի է շուտ նաշել, ամեն գործից ու հոգսից շուտ ծեռք քաշել, որ կարողանայ մի քիչ շուտ պառկել քնելու և ամբողջ շաբաթուան ընթացքում չկարողանալով այնքան քնել, որքան պահանջում է յոդնած մարմինը, բանւորը միշտ անեռանդ է, քնկու ու թոյլ։

Նա քնում է ամեն մի յարմար և անյարմար գէպ-քում, նոյնիսկ մանգալիս ու կանգնած ժամանակ, չնայած որ գործարանի վարչութիւնը հսկում է խստիւ, տուդանքներ է առնում։

Այստեղ բանւորի մէջը կոարողը ոչ թէ աշխատանքի տեսողութիւնն է, որ աւելի պակաս է,

քան սովորաբար մեր գործարաններում է լինում,
այլ աշխատանքի դասաւորութեան անմիտ սիստեմք:

Բոլոր կանալը՝ թէ մարդու գնացած, թէ ազափ,
և բոլոր երեխանները, կանանց աշխատանքի մասին
օրէնքի հրատարակումից առաջ, այդ միենոյն խոր-
տակիչ պայմաններին էին ենթարկուած աղամարդ-
կանց հետ միասին:

Դեռ գրանից էլ վատ. բանւորները այդ ժանր
պայմաններին էլ երթարկուում էին և այսօր էլ
ենթարկուում են զեռ մօր արզանդից, որովհետեւ մինչեւ¹
այսօր ոչ մի սահմանափակում չի եղել ու չկայ չզի
կանանց աշխատանքը փոքր ինչ թեթևացնելու²
համար, գոնէ լողութեան վերջին օրերում:

Դալով ցերեկուայ աշխատանքին, պէտք է ասել,
որ գործն ու հանգիստը սովորաբար հետեւեալ կերպով
են դասաւորուած մեր գործարաններում. վերն արգէն
ասացինք, որ աշխատանքը ակում է 13 ժամ և
տասաւանում է 12-14 ժ. միջեւ: Ամենից լաճախ
կեանքն սկսուում է առաւօտեան ժամը 5-ից և տնօտւմ
է մինչեւ երեկոյեան ժամի 8-ը: Քիչ է պատահում,
որ աշխատանքն վաղ կամ ուշ սկսուի: Օրն երկու
անգամ դորձն ընդհատուում է նախանաշի և ճաշի
համար, սովորաբար կէս ժամ նախանաշին և մի ժամ
ճաշին:

Այսպէս ուրեմն, գործարանը բանւորին ազատ
է թողնում երեկոյեան ժամը 8-ից մինչեւ առաւօտ-
եան ժամի 5-ը, մաշելով նրան $13\frac{1}{2}$ ժամ գոր-
ծարանի լարուած աշխատանքով և միայն $1\frac{1}{2}$
ժամ ընդմիջում անելով: Անկասկած լինում են

բացառութիւններ, բայց բանւորի աշխատանքի տեսղութիւնը այնքան է սովորաբար, որքան յիշեցինք:

Բաւակա՞ն է արդեօք բանւորի ունեցած աղատ ժամանակը, որ կարողանայ մի մասը յատկացնել իւր մտաւոր ու բարոյական պահանջները դո՞նացնելուն, երբ նա տարրուայ մէջ աշխատում է 276, կամ ամենալաւ գէպըում՝ 268 օր:

Գ.

Որ տեսակէտից էլ նայելու լինինք բանւորական հարցին, ինչպէս էլ քննենք բանւորների կեանքի անտեսական պայմանները, առողջապահական զրութիւնը, մտաւոր զարգացումը, բարոյական վիճակը, վերջի վերջոյ կզանք այն եղբակացութեան, որ ամենից կարեռը նրանց նիւթականի հարցն է՝ նրանց վարձադինը:

Վարձագնի կողմից երկու տեսակ բանւորներ կան. ոմանք քիչ վարձագին ունին և տիրոջ հացով են ապրում, միւսներն աւելի մեծ վարձ են ստանում և ապրում իրանց հացով: Հասակաւոր բանւորը միշին թուով ամսական ստանում է 12 ր. երբ ապրում է իր հացով և 7 ր. երբ տիրոջից է ստանում:

Երկու գէպըում էլ կնոչ և տղամարդու աշխատանքի միշև մեծ տարրերութիւն կայ:

Մեր զորձարաններում պատահող վարձատրութեան ձևերը բաւական բազմազան են, բայց

նրանց կարելի է երեք տեսակի բաժանել. ամսական,
օրավարձ և գործավարձ:

Սակայն վարձագնի ձեզ ոչ մի էական ազդեցութիւն չունի աշխատածի որբանութեան վրա. այստեղ պիտաւորն այն է, թէ արդիւնաբերութեան համար ո՞ր աստիճան կարեւոր է բանւորի կատարած գործը, ո՞րքան է նրա հմտութիւնը և այլն:

Միջին հաշւով՝ երեք ձեռվ վարձ ստացողներն էլ համարեա միւնոյն գումարն են վաստակում, այն է, ինչպէս վերն էլ ասացինք, 12 ր. ամսական հաստկաւոր բանւորն է ստանում և 6 ր. անչափահասը:

Այս վարձագինն ունենալով՝ բանւորն իր պահանջները քչացնելով հասցնում է մինչեւ տունում:

Բնակարանի կողմից նա գոհանում է չափազանց քչով, քաշ է գալիս կեղառա արհեստանոցներում և գոհ է, երբ մի ներքնակ ունի տակը գցելու ամենալաւ դէպքում նա ունենում է մի սեպհական անկիւն, ախոռի նման կեղառա ու գարշահոտ:

Միայն այն բանւորներն են հեռու ապրում գործարանից, որոնք աշխատում են փոքրիկ գործարանում, որ գեռ իսկական մանուֆակտուրի կերպարանք չի ստացել, որտեղ գեռ քիչ մարդ է աշխատում և գործը ձեռքի աշխատանքով է կատարւում:

Բոլոր խոշոր գործարաններում բանւորները միշտ ապրում են գործարաններին կից, նրանց համար յատուկ շինած շէնքերում:

Այդ շէնքերը համարեա առանց բացառութեան իրար նման են:

Սովորաբար խոշոր գործարաններին կից, երբեմն նաև փոքր գործարանների մօտ գտնւում են փոքրիկ բնակարաններ, առանձնակի, մի կամ երկու սենեակով յանախ խոնաւ ներքայարկում:

Բանւորերի կացարանները շատ աեղերում ահագին զօրանոցի նմանութիւն ունին, նեղ ու մուժ միշանցըներով, երկու կողմից փոքրիկ նկուղներ՝ որոնք իրարից բաժանուած են մինչև առաստաղը չհասնող հասարակ տախտակէ պատով:

Կան զօրծարաններ, որտեղ բանւորների բնակարանները բաժանուած են փոքրիկ նկուղների. այս նկուղներում ապրում են ընտանիքով և առանց ընտանիքի բանւորներ: Մեզանում այս ձեւի բնակարաններ շատ քիչ կան:

Բժան բաժան նկուղներ շինելու նպատակն է, ըստ կարելոյն ընտանիքը միւս բանւորներից առանձնացնել. բայց սխալ կլինէր կարծել, որ մի նկուղում մի ընտանիք է միայն ապրում, սովորաբար ամեն մի նկուղում ապրում են 2-3 ընտանիք:

Ոչ մի գործարանում, ոչ մի տեղ որոշ չափ չկալ, որի հիման վրա տեղաւորելիս լինէին բանւորներին այդ նկուղներում. միակ սահմանը նոր մարդ տեղաւորելու ֆիզիքական անհնարաւորութիւնն է:

Իբր բացառութիւն պատահում են գործարաններ, որտեղ վարչութիւնը բանւորներին տեղաւորելիս՝ ուրիշ բաների հետ մտածում է նաև այն մասին, թէ միևնոյն ժամերի՞ն, միևնոյն հերթի՞ն են աշխատում նոյն նկուղում՝ ապրող բանւորները, թէ ոչ:



Գործարաններն ուսումնասիրելիս* մեծ մասամբ
պատահում են չափից դուրս խիտ բնակեցրած կա-
ցարաններ: Իւրաքանչիւր մարզուն մէկ խոր. սաժէնից
պակաս տարածութիւն է գալիս. շատ դործարան-
ներում այդ թիւր հասնում է $\frac{1}{2}$ խ. սաժ. և նոյն
իսկ $\frac{1}{3}$ խ. սաժէնի:

Ընդհանուր ննջարանի պատկերը ոչ մի կերպ
չի տարբերում առանձին նկուղներից: Այդ ննջա-
րանների կաղմութիւնն ամեն տեղ միատեսակ է:

Շատ քիչ է պատահում, որ բանւորներին բացի
տախտից, սեղան, աթոռ կամ դրա նման բան տալին
դործարանից:

Բանւորները սովորաբար քնում են տախտերի
վրա, որ կապած է լինում սենեակի երկարութեամբ,
առանց բաժանումների. նրանք պառկում են մէկ
մէկու մօտ, իրար վրա թափուած:

Յանախ այդ տախտերը երկու կարգ են լինում
մէկ մէկու վրա, այնպէս որ վերևի տախտերը,
կամ լաւ ևս՝ թառերը, շինուած են լինում առաս-
տաղից միայն $\frac{3}{4}$ արշին ցած:

Եթէ ի նկատի ունենանք ննջարանում քնող-
ների բաղմութիւնը, դանաղան անհրաժեշտ յարմա-
րութիւնների չլինելը, ինչպէս օրինակ, լուացարանն
է, որի բացակայութեան պատճառով բանւորները
ստիպուած են իրանց լուացը ննջարաններում
անելու և փռելու, այն ժամանակ հասկանալի
կդառնայ, թէ այդ ննջարանները որքան վնասա-
կար են առողջութեան համար:

Այսպէս ուրեմն մի կողմից բոլոր պայմանները

կան, որ բնակարանների օդը չափազանց փչանայ, միւս կողմից արհեստական կարգին օդանորոգում (վիճակիացիա) չկայ:

Յականի է, որ բնական օդանորոգումը շէնքի պատերի արանքով, շատ անբաւարար է փչացած օդը բոլորովին մաքրելու համար: Վերը լիշածի նման կացարաններում, նոյն իսկ ամենալազող պայմաններում, բնական օդանորոգումը չի կարող հարկաւոր մաքուր օդի քանակութեան ^{1/3}-ից աւելին հայթայթել:

Բոլորովին հասկանալի է, կարծում ենք, թէ ինչ սարսափելի նշանակութիւն ունի մաքուր օդի այդ չնչին քանակութիւնը մարդու համար և թէ ինչ են նշանակում գործարաններն ուսումնասիրողների կարծ նկատողութիւնները. «օդը դարշահոտ է», «օդը շատ ծանր է», «օդը բոլորովին փչացած է» և այլն:

Աշխատելով գործարանների փչացած օդում, քանարներն անցնում են իրանց փչացած օդով լիբր ննշարանները, որոնք գտնւում են գործարանների մօս:

Այդ տեսակ քանարները միշտ զգուելի օդ են շնչում և յանախ շատ աւելի վատ պայմաններում են գտնւում, քան նրանք, որոնք ամեն օր երկար զբոսանք են անում դաշտում և վերադառնում են երեկոյեան դիւդ, իրանց խղճուկ խրճիթները, փոքրիկ տնակները, որտեղ օդը միշտ աւելի մաքուր է քան քանարական «զօրանոցում»:

Վարձու բնակարանները համարեա ոչնչով չեն

տարրերւում գործարաններին կից եղած ննջարան-ներից:

Բայց նրանք դոնէ յատկապէս բնակուելու համար են շինուած:

Կան արդիւնաբերութեան այնպիսի ճիւղեր, որանք բանւորներն ապրում են և աշխատում են հենց նոյն շէնքում, կարծես առանց զգալու այն անյարմարութիւնը, որ ներկայացնում են այդ շէնքերը աշխատանքի և հանգստութեան համար:

Այդ կարգի արհեստանոցներից ամենալաւ նմուշ կարող են ծառայել խորի գործարանները:

Արհեստանոցը մտնելիս՝ այցելուն կարծես անտառ է մտնում. մի կողմ քաշելով ամեն ուղղութեամբ կախկախուած խորացու կեղեր, զգուշութեամբ ոտքը փոխելով, որ կազում է 1—2 վերշոկ ցեխով ծածկուած յատակին, ամեն քայլին ընկնելով շրալի ցեխով լիքը փոսերը, որ կազմուել են յատակի փտած ու խոնաւ տախտակների մէջ, դիպչելով շրի գոյլերին, ամեն անգամ ոիսկ անելով ոտի տակ տրորելու յատակին սողացող փոքրիկ երեխաններին, այցելուն վերջապէս հասնում է պատուհաններից մէկին, որտեղ եռում է կեանքը:

Այստեղ արհեստաւորներն այնքան խիտ են հաւաքուած, որ մեծ մասամբ ամեն մէկին $\frac{1}{2}$ խօսաժ. օգ է ընկնում: Այստեղ է բանւորուհին ծնում իր երեխային ամենքի աչքի առաջ, այստեղ է պառկում բանւորը, երբ հիւանդ է լինում և դեռ դիմանալու ոյժ ունի. այստեղ և մեռնում է, թէկուղ վարակիչ հիւանդութիւնից:

Տեսանք, թէ գործարանը բանւորին ինչ բնակարան է տալիս, հիմա տեսնենք նրա սնունդը:

Սև հաց, մի կտոր պանիր, ոռխ, սխտոր, երբեմն մի երկու ձու, իսկ ամառը հաց ու միրզ—ահա բոլորը: Իսկ երբեմն աւելի վատ՝ թէ որակով և թէ բանակով: Բանւորների ամբողջ սնունդը սև հացն է և մի քիչ էլ դատարկ արդանակ, չնչին քանակութեամբ մասվ: Պաս օրերը ոչինչ չի փոխարինում մասին:

Կացարանի վարձը ստիպում է բանւորին իր առանց այն էլ վատ սնունդը աւելի պակսեցնելու, որպէսզի ստացածից աւել չժախսէ: Տղամարդն իր ստացածի 63 ⁰/₀ ծախսում է միւս բոլոր պահանջների վրայ, այն է շորի, ոտնամանի, հարկի և ուրիշ վճարելիքների, հիւանդ ժամանակուայ ծախսածը ծածկելու, ուրախութեան ու զուարնութեան, որ լինում է տօն օրերին պանդոկներում՝ թէսվ ու ոգելից խմբներով: Երկարատև աշխատանքից յետո՛ բոլորովին նախանձելի չէ այդպիսի սնունդ ստանալը, այդ տեսակ կեանք վարելը:

Դ

Այժմ մենք կխօսենք թէ ինչ աղբեցութիւն է անում գործարանը բանւորների ֆիզիքական յատկութիւնների վրա:

Գործարանական աշխատանքը և զրա հետ կապուած գործարանական կեանքի պայմանները անկասկած վատացնում են բանւորի ֆիզիքական յատկութիւնները, և այդ վատացումն նոյնքան

մեծ է, որքան վատ են այս կամ այն պարապմունքի
առողջապահական պայմանները:

Այդ ազգեցութիւնը աւելի ևս վնասակար է
դառնում, երբ երկար ժամանակ է տևում և կեանքի
այն շրջանը, երբ բանւորի օրդանիզմը դեռ կազմակեր-
պուելու և հասունանալու վրա է:

Թէ հասակով, թէ կուրծքի մեծութեամբ և
թէ մարմնի քաշով դործարաններում աշխատող
երեխաներն աւելի վատ են, քան թէ դիւզացի երե-
խաները, որոնք դործարանական շրջաններում չեն
եղել:

Ուշադրութեան արժանի է այն տարբերութիւնը,
որ կայ դործարաններում աշխատող ու չաշխատող
երեխաների միջև։ Այդ տարբերութիւնն ամենա-
պերճախօս փաստն է, որ ցոյց է տալիս թէ որքան
կործանիչ ազգեցութիւն ունի դործարանական
կեանքը երեխաների վրա։

Դործարաններում աշխատող չափահաս բան-
ւորները բաց օդում աշխատող բանւորների հետ
համեմատած, ֆիղիքապէս՝ աւելի թոյլ ին։

Դործարանական արդիւնաբերութեան որ նիւղն
էլ որ վերցնելու լինինք, միշտ և ամեն տեղ մենք
կնկատենք միևնույն իրողութիւնը — շնչառութիւնից,
կամ լաւ և՝ արտաշնչող թոյներից ու աժխաթթուից
տռաչացած փչացած օդ և չափազանց բարձր
աստիճանի չերմութիւն։ այս երկուսն էլ առաջ
են գալիս այն պատճառով, որ արհեստանոցի փոքրիկ
տարածութեան մէջ անհամեմատ մեծ թուով մարդիկ
են շնչում։

Գործարանի վատ աղդեցութեան այդ արմատական պատճառն աւելի ևս վատթարանում է, երբ նրան միանում են մեքենաների շերմութիւնը և արհեստանոցի օգում տարածուած փոշիներն ու դաղերը:

Մեր բոլոր գործարաններում, շատ քիչ բացառութեամբ, չկալ օգանորոգման համար անհրաժեշտ յարմարութիւններ: Լուսամուտներն ամբողջ ձմեռը մեխած են ու լաւ փակած, և միայն նրանց փոքրիկ օդանցքներով կարելի է կանոնաւորել արհեստանոցի օդը:

Փոքր գործարաններում դեռ բանւորը մի փոքր աղատութիւն ունի. խոշոր գործարաններում նա սեղմուած է մի նեղ շրջանակի մէջ և այնքան սերտ կապուած է, մեքենալի հետ, որ նրա անծնական զգացմունքներն ու կամքը լիովին անհետանում են:

Ամբողջ 12-13 ժամ նա պէտք է փչացած օդ ներշնչէ, և նա շնչում է այդ օդը շարունակ՝ աշխատանքի մի ընդհատումից մինչեւ միւսը:

Փոքր գործարաններում աշխատանքը միայն ցերեկն է լինում, հետեւապէս գիշերը քիչ փոխւում է նրա միջի օդը:

Խոշոր գործարաններում ընդհակառակն, աշխատանքը անընդհատ շարունակուում է, որ ու գիշեր, հետեւապէս բանւորներն իրանց աշխատանքը սկսում են արդէն փչացած օդում, որովհետեւ արհեստանոցների օդը նորոգելու սովորութիւնը չի արմատացած, խէլ բնական օդանորոգումը անբաւարար է մեծ գործարանների համար:

Այսպէս ուրեմն մեծ գործարաններում բանւորը շարունակ վատ օդ է շնչում: Կարիք կա՞ արգեօք երկար խօսելու, թէ որքան վնասակար է փակ տարածութեան մէջ աշխատանքը, որտեղ և օդն է փչացած և զերմութիւնն է չափից աւելի: Եւ միթէ այստեղ ևս միւնոյն մեծ չափերով չի պատահում մահացութիւնն ու հիւանդութիւնը, ինչպէս որ սեղմուած զօրանոյներում և բանտերում:

Միւս կողմից գործարանի աշխատանքը հէնց իր բնաւորութեամբ մի սահմանափակում է մարդուս մկանալին աշխատանքի:

Հէնց որ բանւորը որոշ ժամին կանգնեց իր մեքենալի առաջ, նա արգէն կորցնում է իր կամքն ու շարժումների ազատութիւնը և ինքն էլ դառնում է մի հասարակ մեքենայ, նրա աշխատանքը անդիտակից շարժումների մի շարք. նրա մկանները շատ քիչ ուժ են կորցնում, թէև այդ աշխատանքը յանախ աւելի յոդնեցնող է, որովհետեւ անընդհատ է և միօրինակ:

Կանոնաւոր, առողջապահիկ կարգով կատարուող մկանալին աշխատանքը բարձրացնում է մարդու մարմնի ֆիզիքական յատկութիւնների աստիճանը նոյնչափ, ինչ չափով մկանալին աշխատանքի բացակայութիւնը, նեարդաշնակ գործունէութեան խանդարումը, թէպէտ աննկատելի, բայց միշտ հասցնում են օրդանիզմը կործանիչ հետեւանքների:

Մկանների ամեն մի կժկում առաջ է բերում աւելի արագ արիւնաշրջութիւն ամբողջ մարմնի

մէջ, աւելի լաւ սննդառութիւն մարմնի բոլոր մասերում և աւելի մեծ եռանգ բոլոր կենսական գործողութիւնների համար: Սակայն գործարանի բանւորը միշտ պէտք է յարմարուի մեքենային, միշտ պէտք է աշխատի նրա թեկալութեամբ:

Մկանային աշխատանքի այսպէս սակաւանալը երկրորդ դլխաւոր պատճառն է գործարանների վնասակար ազգեցութեան:

Մնացած բոլոր պայմանները, եթէ աչքի առաջ ունենանք նրանց արած ազգեցութեան մեծութիւնը, աւելի փոքր նշանակութիւն ունին, բայց բոլորը միատեղ բանւորին հասցնում են վատասեռման:

Որքան նպաստաւոր է բաց օդում կատարուող գաշտային՝ կամ ընդհարապէս հողի հետ կապուած աշխատանքների ազգեցութիւնը բանւորի համար, նոյնքան վնասակար է գործարանական աշխատանքը, որը իշեցնում է բանւոր դասի ֆիդիքական յատկութիւնների աստիճանը:

Ո՞ւմ վրա ծանր տպաւորութիւն չէ արել բանւորի ողորմելի, տժգոյն, քնկոտ գէմքը: Կուչ կուչ եկած կաշի և մանկական մկաններ, անտարբերութիւն և անմասնակից վերաբերմունք դէպի ամեն բան. ահա գործարանի բանւոր մարդք:

Գործարանի աշխատանքը աարինների ընթացքում մաշում է մարդու օրգանիզմը և վերջապէս դլորում է նրան դերեղման: Բայց քչերն են մեռնում գործարաններում. մեր բանւորը մեռնելու համար դնում է դիւդ, որի մասին լսել է միայն իւր հօրից և իր անցագրից:

Մեր գործարանների կործանիչ ազդեցութիւնը չի վերջանում այն սերունդով, որի վրա ազդում է անմիջապէս:

Օրգանիզմի համար միանգամայն վնասակար պայմաններին յարմարուելու հետևանքն այն է լինում, որ շուտով մեռնում են այն բանւորները, որոնք իմանել առանձին ամրութիւն ու զիմացկունութիւն չունին:

Իսկ վաղաժամ չմեռնողները կեանք են տալիս մի նոր, բայց արդէն թող սերնդի և եթէ գործարանական բանւորների կեանքի պայմաններն անփոփոխ մնան, ապա նրանց ազդեցութիւնը նորեկ սերունդի վրա շատ աւելի զօրեղ կլինի, քան նրանց հայրերի վրա է եղել. հետեւանքը կլինի թողերի յառաջընթաց մահացութիւնը և ֆիղիքական յատկութիւնների նոյնպէս յառաջընթաց վատացումը. այսինքն այն, որ կոչւում է ազգաբնակութեան ալասեռումն:

Այսպէս ահա փոխելով իր խեղճ ու մխոտած, բայց սեփական խրնիթը հսկայական գործարանի հետ, թողնելով իր հողը, որ կիսով չափ ապահովում էր նրա ապրուստը՝ թէև ոչ միշտ իր անպտուղ լինելու պտանառով, թողնելով իր տնային արդիւնաբերութիւնը, տնայազործութիւնն ու գործարանի համար տանք աշխատելը և մտնելով զործարան իր աշխատանքը մախելու, — ի՞նչ է ստանում բանւորը:

Բանւորի օրը զիշեր դարձնելով, սպառելով նրա ուժը մինչեւ վերջին աստիճան, գործարանը խորտակում է նրա ընտանիքը, որ անպէտք է ալլես և

չնշում, սրբում է նրա առանց այն ել սակաւաթիւ բարոյական հասկացողութիւններն ու աւանդութիւնները, որոնցով ապրում է զիւղացին:

Կորցնելով իր ունեցած բարոյական հասկացողութիւններն ու սովորութիւնները, որոնք գուցէ խաւար ու յետամնաց են, ի՞նչ է ստանում նրանց փոխարէն բանւորը և ինչ կարող է ստանալ, քանի որ նրա ամբողջ կեանքն անցնում է աշխատանքի, քնի և զինետան մէջ:

Աշխատանքի և բանւորական կեանքի ներկայ պալմանների մէջ՝ ընտանիքի գոյութիւնը գործարաններում մի անհնարին բան է. միւս կողմից բանւորի մտաւոր և բարոյական վայրենացումը այս ընտանիքը դարձրել է աւելորդ ու անպէտք մի բեռ և սեռի յարաբերութիւնը հասցըրել է անասնական աստիճանի:

Աշխատանքի անկանոն վիճակը, որ հետեւանք է մի շարք տնտեսական պալմանների, իւր ամբողջ ժանրութեամբ ընկնում է գործաւորների վրա:

Գործարանը աւելորդ է դարձրել ուժն ու վարպետութիւնը. դրա տեղ նա զրել է այնպիսի չնչին և մասնակի աշխատանք, որ չի պահանջում ոչ մկանների և ոչ մտքի լարում, այլ անընդհատ ու միօրինակ մկանային պարզ շարժումներ։ Այս ամենը մարդուն իրան դարձնում են մեքենայ և ոչ միայն սահմանափակում են մարմնի ու խելքի զարգացումը, այլ և խորտակում են մարմինը ֆիզիքապէս և բթացնում են միտքը։

Միւս կողմից, դժբախտաբար, մեռնում է նաև
մեր արհեստագործութիւնը:

Քաղաքակրթութեան այդ մեծ գիւտի՛ աշխա-
տանքի բաժանման մէջ, բաժանւողը ոչ թէ աշխա-
տանքն է, ինչպէս ասում է Ռէօսկինը, այլ ինքը
մարդը, որի մաքի մնացած փշրանքները բաւական
չեն լինում, որ նա կարողանալ մի մեխ կամ մի
քորոց շինել. բոլոր ունեցածն այնքան է պէտք
դալիս, որ կարողանալ շինել մեխի դլուխը կամ
քորոցի ծալրը:

Եւ իսկապէս այդ պայմաններում «մարդը»,
մարդկային անձնաւորութիւնը պէտք է չքանալ, և
զարմանալի չէ, որ խեղճ աշխատաւորները, «բան-
տորական շարժում» կոչուած խլրտումների ժամա-
նակ, մեծ մասամբ չեն հասնում այն հետեանքին,
ինչ որ հարկաւոր է, և ընդհանրապէս անընդունակ
են իրանք ստեղծելու որևէ գեթ փոքր ինչ կարգին
կաղմակերպութիւն իրանց արդար ու ընական
իրաւունքը պահպանելու համար...

Հոգասիրութեամբ ու հոգագործութեամբ միայն
կարելի է բացատրել որևէ ազգի գոյութեան պահ-
պանութիւնը պատճական աննպաստ պայմաններում:

Ի՞նչ կլինէր, եթէ ազգերն իրանց երկիրը կորց-
նէին, այն՝ ինչ որ պատահել է հրէաներին: Տարագիր,
հողից կտրուած ու թափառական վիճակ: Վերջապէս
կարիք կզգացուէր նողը նորից ծեռք բերելու, բայց
արդէն ուշ կլինէր:

Հողի համար է, որ ազգերը պաշտպանում են
արտաքին թշնամուց, նոյն այդ հողի համար պէտք

է պաշտպանուել և ներքին թշնամուց՝ անտեսական կռուի մէջ:

Այդ կռիւր չափաղանց յամառ բնաւորութիւն ունի, և յաղթողը կլինի նա, ով լաւ կհասկանայ իր ժամանակի պահանջները:

ՎԵՐՉԻՆ ԽԾԱՔ

Խնչ անել:

Մեր գրողներից առաջին անգամ Ստեփանոս Նաղարեանցն էր, ինչպէս զրում է յալտնի հեղինակ Լէօն *), որը յալտնեց թէ հային ոչ մի պարծանք չէ հոչակուած վաճառականութիւնը, քանի որ նա առևտրական միջնորդութեան կերպարանը ունի և արդիւնագործութիւն չէ յառաջացնում մեր երկրում:

Գրիգոր Անձրունին էլ այդ տեսակէտից նալելով վաճառականութեան, ասում էր թէ եկել է կամ կզայ ժամանակը, երբ հայը իրը միջնորդ էլ գուրս կծդուի հրապարակից:

Հայի միջնորդութիւնը հարկաւոր էր, քանի որ մեր երկիրը զժուարութիւններ էր ներկայացնում օտարների համար: Կովկասեան պատերազմները, յարմար ու արագ հաղորդակցութեան բացակայութիւնը ծեռնտու էին միջնորդ հայերին, որոնք երկրի հում նիւթերը ուրիշ երկիրներ էին արտահանում և դրսից էլ ապրանքներ ներմուծում:

Այժմ կովկասը խաղաղացաւ, ուստի հաղորդակցութիւնը արագ ու ապահով է դառնում:

*.) Տես Գրիգոր Արծրունի, Հատ. II.

կմնան հայերը միշնորդներ:

Ալո՞ւ, գուցէ մի առժամանակ կմնան, մինչեւ
որ օտարազգիները կմտնեն մեր երկիրը, լաւ կճա-
նաչեն նրան, և շուտով ամեն ինչ իրանց ծեռքը
կառնեն:

Ի՞նչ կմնայ հայերին—միայն մանրավաճառու-
թիւնը կամ պարազիսներին ժառակելը, որպէս միշ-
նորդներ:

Դեռ ուշ չէ, եթէ հայերը սկսեն երկրի բնական
հարստութիւնները շահագործել:

Բայց հայը միայն վաճառական չէ, ազգի մեծա-
մասնութիւնը հողի հետ է կապուած, երկրագոր-
ծութեամբ է պարապում:

Բայց դժբախտաբար երկրագործութիւնն էլ
մեղանում չէ զարգանում, որովհետեւ մեր երկրում
միշոցներ, դումարներ չեն դործազրւում նրան բար-
ւոքելու համար:

Եւրոպայում մի քանի տեղեր, օրինակ Զուի-
ցերիայում, զիւղացիները առանձին վերցրած՝ շատ
հարուստ չեն, ուստի նրանք միանում են, ընկերակ-
ցութիւններ են կազմում, և ահա հաւաքական
գործակցութիւնը պատրաստում է, նոյն անհրաժեշտ
ոյժը՝ հողագործութիւնը զարգացնելու համար—
դրամագլուխը:

Մեղանում հողագործութիւնը մի պարապմունք
է, որ ապրուստի նուազ միշոցներ է տալիս ազգա-
բնակութեան. երբ տարուայ բերքը աշող է, մեր
զիւղացին դեռ կարող է ապրել առանց դժուարու-
թիւնների:

Բայց լինում են բնական զանազան պատահարներ, վերչապէս ինքը, գիւղացին, զանազան պատճառներով չէ կարողանում հերկել իր գետինը, ձեռք բերել ապրուստի անհրաժեշտ միջոցներ: Այս տնտեսական ծախորդութեան մէջ նա ալլէս չէ կարող ինքնապլուխ ապրել, դիմում է վաշխառուին, մեծ տոկոսների տակ է ընկնում:

Երկրագործական գործիքները նահապետական գրութեան մէջ են, փող չկայ նորերը, կատարելագործուածները ձեռք բերելու համար. փող էլ լինի, չկայ հասկացողութիւն, թէ որքան օգտակար են գրանք:

Ի՞նչ անել:

Լոկ բարոյական խրատներով, քարողներով բան չի դառնայ, իրաւացի ասում է պ. Լէօն: Ո՞րքան ուզում էք ասացէք, թէ լաւ են կատարելագործուած գործիքները, թէ պէսք է հողը մշակել, բայց գիւղացին ընկնուած է նիւթական, տնտեսական հանգամանքների տակ:

Չկայ խոշոր հողատիրական կապիտալ, չկայ ընկերական՝ կօպերատիւ սկզբունք, ժողովուրդը ինքնօքնութեան գաղափար չունի, գիւղական էժան կրեդիտը զոյտութիւն չունի:

Ահա ինչ գրութեան մէջ է գիւղացի ժողովուրդը:

Եւ նա անդադար զաղթում է քաղաքները, թողնելով ապարդիւն երկրագործական պարապմունքը, թողնելով անտէր ու անպաշտապան իր ընտանիքը, իր հայերենի օջաղը: Այդպիսով ընկնում է գիւղը, բայց փոխարէնը չի բարձրանում քաղաքը...

Հարկաւոր է այդ ցաւալի դրութեան առաջն
առնել, խելացի միջոցների գիմելով:

Զօռուանանք, որ մեր ժողովրդի կուլտուրական
առաջապիմութեան խնդրում շատ մեծ զեր կարող
են խաղալ դպրոցը, զրականութիւնը, թատրոնը և
առհասարակ համաշխատակցութիւնը, որի կարիքն
այնքան զգալի է տնտեսական կեանքում և որի
մասին մենք արդէն խօսել ենք «Կարիք և բարե-
գործութիւն» զրքոչի մէջ, 1901 թուին: Խորհուրդ
ենք տալիս կարգով նոյնպէս մեր գիրքը — «Ով է
յանցաւորը»:

Համաշխատակցութեան շնորհիւ կարելի է կազ-
մակերպել կօօպերատու ընկերութիւններ, որոնք
կարող են մեծամեծ օգուտներ հասցնել մեր ժողո-
վրդին, մեր խղճուկ գիւղացիներին:

Այդպիսի կազմակերպութիւնների օգտակարու-
թիւնը վաղուց արդէն հասկացել են մեղանից աւելի
քաղաքակիրթ ազգերը և ամեն կերպ օգտառում են
նրանց բարիքներից: Եւ որքան մեծ են այդ բա-
րիքները:

Համաշխատակցող ընկերութիւնները, իրաւացի
կերպով նկատում է պ. Ե. Թոփչեան իւր յօդուած-
ներից մէկում *), զգալի չափով էժանացնում են
առօրեայ ապրուստի ամենանհրաժեշտ պիտոյքները
և այն ոչ մէայն իրանց անդամների, այլ նաև ամբողջ

*.) Տես Մշակ, 1903 թ. № 65.

հասարակութեան համար: Օրինակ, հէնց որ մի որևէ զիւղում, քաղաքամասում կամ թաղում սպառող ընկերութիւն է կազմում և իր սեպհական խանութը բաց անում, այն ժամանակ շրջակալքի վաճառականները ստիպուած են լինում իրանց ապրանքների որակը լաւացնել և դներն էժանացնել, որպէսզի կարողանան գէթ առժամանակ դիմադրել հզօր մրցակցին—սպառող ընկերութեան խանութին, որ հէնց առաջին քայլափոխից հնարաւորութիւն ունի էժան ու լաւ ապրանք մատակարարել գնողներին: Ահա այդպիսով դներն ընկնում են և սպառողները շահւում:

Բանսելի ասելով՝ վաճառականները աշխատում են ամենաքիչը $30^{\circ}/_0$, իսկ երբեմն նոյն իսկ 50 , 100 և $150^{\circ}/_0$. ուրեմն եթէ մի բանւորական ընտանիք տարեկան 300 ըուբլու մթերք է սպառում, զրա $1/3$ մասը, այսինքն 100 ըուբլի վաճառականին է բաժին ընկնում: Բայց եթէ այդ միենոյն ընտանիքը սպառող ընկերութեան անդամ դառնայ, այն ժամանակ այդ կլորիկ գումարը իրան կմնայ և նրա տնտեսական գրութիւնը կրաքելաւէ:

Վիճակազրական տեղեկութիւններից երեսում է, որ Սարատովի նահանգում մսագործները միսր վաճառում էին $100^{\circ}/_0$ օգուտով: Բայց հէնց որ „Самолетъ“ նաւի ժառախողները այգտեղ սպառող ընկերութիւն հիմնեցին, միսր զրեթէ կիսով չափ էժանացաւ: Այդ ընկերութեան խանութում երբ մի որևէ ապրանք է պակասում, միւս վաճառականները դներն իսկոյն բարձրացնում են $50^{\circ}/_0$ -ով

և ընդհակառակը: Այդպիսով տեղական սպառող ընկերութիւնը գառել է զների թելագրող և իհարկէ այդ թելագրութիւնը միշտ էլ օգտակար է լինում ընդհանրութեան համար:

Եւ եթէ նա սպառող ընկերութիւնների շնորհիւ մի որեւէ խնայողութիւն անէ, այն ժամանակ կը կարողանայ բաւարարութիւն տալ իւր միւս անհրաժեշտ կարիքներին: Իսկ այդ հանգամանքը երբէք վնասակար ազգեցութիւն չի ունենայ բանւօրական վարձի վրա:

Եւ միթէ չբաւոր գասակարգն արդէն բաւարար չափով ձեռք է բերում իր ուտելիքն ու հազնելիքը: Երբէք: Այդ մասին Լուի Բերտրանը առաջ է բերում հետեւեալ ուշագրաւ փառար.—Գենտի և Բրիւսէլի սպառող ընկերութիւնների անդամները մի ժամանակ դիվիդենդը ստանում էին կանխիկ փողով, բայց երբ փողի փոխարէն նրանց մարկաներ տրուեց՝ խանութից մթերքներ գնելու համար, այն ժամանակ վիճակագրական տեղեկութիւններից երեաց, որ իւրաքանչիւր անդամը այժմ միշին թուով աւելի շատ հաց է գործածում, քան թէ առաջ: Դրանից կարելի է գուրս բերել այն եղբակացութիւնները, թէ սպառող ընկերութեան անդամը սկզբում իր ընտանիքի բերանից նոյնիսկ չոր հացն է խնայել, որպէսզի միւս պահանջներին բաւարարութիւն տալ. իսկ երբ նա կանխիկ փողի փոխարէն մարկաներ է ստացել, այն ժամանակ միւս պահանջներն է զսպել և հացի քանակն աւելացրել:

Այսպէս ուրեմն, սպառող ընկերակցութիւններն

էժանացնում են ապրուստի միջոցները, իսկ դա մի բարերար գործօն է ներկայ տնտեսական կեանքի ժանրութիւնը թեթեացնելու համար:

Կօօպերատիւ ընկերութիւնները կարող են օդնութեան հասնել գործադուկի, հիւանդութեան կամ մահուան գեպքերում, և այդ երեսովթը արդէն շատ մեծ ծաւալ է ստացել Եւրոպայում, որտեղ տնտեսական կեանքն աւելի զարգացած է և դասակարգային անտաղոնիզմը աւելի սուր կերպարանք ստացած:

Բելգիական միքանի ընկերակցութիւններ իւրաքանչիւր անդամից շաբաթական 5 սանտիմ (մօտ 2 կոպ.) վճար ստանալով, պարտաւորում են այդ անդամի հիւանդութեան ամբողջ ընթացքում նրա ընտանիքին ծրիաբար հաց մասակարարել:

Մի քանի ուրիշ ընկերութիւններ շաբաթական նոյն վճարով պարտաւորում են անդամի ամբողջ ընտանիքին ծրի բժշկական օդնութիւն հասցնել, երբ որ հարկաւոր լինի:

Անդիհայում սպառող ընկերութիւններից շատերը պարտաւորում են իրանց անդամի մահուանից յետոյ անմիջական օդնութիւն հասցնել նրա որբերին:

Ընկերակցութիւնները հնարաւորութիւն են տալիս առանց զրկանքների խնայողութիւն անելու: Կարծում ենք ամեն մի անհատ իւր կաշու վրա փորձած կլինի, թէ որքան դժուար է սե օրուայ համար մի որեւէ խնայողութիւն անել, երբ կարիքները օրէցօր

բաղմանում են, երբ պահանջները անվերջ ճնշում են իրանց ծանրութեամբ:

Իսկ կօօպերատիւ ընկերութիւնը տալիս է այդպիսի հնարաւորութիւն և այն՝ առանց զոհաբերութեան: Կօօպերացիայի անդամը կարող է սովորական չափով իր ծախսերն անել, իր պահանջներին բաւարարութիւն տալ, բայց միենոյն ժամանակ որոշ խնայողութիւն անել: Դա այն գումարն է, որ նա իբրև զիվիդենդ պիտի ստանայ ընկերութիւնից իր կատարած ծախսերի համեմատ, այսինքն որքան նա շատ ապրանք է գնել ընկերութեան խանութից, նոյնքան մեծ բաժին կատանայ տարեկան ընդհանուր զիվիդենդից: Այդպէս ուրեմն, սրամիտ կերպով նկատում է տնտեսագէտ Ժիզը, եթէ ատամնաբոլժները իրաւունք ունին իրանց դռների վրա լայտարարութիւն կպցնելու, թէ «այստեղ ատամները բաշում են առանց ցաւի», կօօպերատիվ ընկերութիւնները աւելի քան իրաւունք ունին իրանց դռների հակատին արձանադրելու — «այստեղ կարելի է խնայողութիւն անել առանց զրկանքների ու տանջանքների»:

Ծնկերակցութիւնները չափաւորում են ապրանքների գները, որ շատ մեծ նշանակութիւն ունին ամբողջ ժողովրդի համար: Այդ նշանակութիւնը հասկանալ կարելի է Լուի Բերտրանի և Ֆերդինանդ Պէլութի առաջ բերած հետևեալ փաստերից: Սպանիական ամենալաւ նարիչների (ապելսին) հազարը արժէ միջին թուով 22 ֆրանկ, ուրեմն հատը մօտ $2^{1/2}$ սանտիմ, այն ինչ խանութպահները վաճա-

ռում են 1200 °/₀ թանկ: Շլորի 100 քիլոգրամք արժէ Վիլնէվէյում 42 ֆրանկ, իսկ Պարիզում 2-3 անգամ աւելի: Ամենալաւ բրինձը Մարսէլում արժէ ֆունտը 17 սանտիմ, իսկ Պարիզում 50 սանտիմ:

Դեղավաճառները դնում են անտիպիրինի քիլոգրամք 30 ֆրանկի, իսկ վաճառում են 300 ֆրանկի. Խինին դնում են քիլոգրամք 80 ֆրանկով, իսկ վառում են 1000, 1500, նոյն իսկ 2000 ֆրանկով:

12 ֆրանկի դնած հանգուստեղենը վաճառականները ծախում են 35 ֆրանկի. լաւ հեծանիւր արժէ 80 ֆրանկ, բայց վաճառում են 300 ֆրանկով. և այլն և այլն:

Եւ այդ տեսակ սանձարձակ շահագործութիւն գոյութիւն ունի ոչ միայն Ֆրանսիայում, այլ նաև բոլոր միւս երկրներում. իսկ մեր կուլտուրապէս խակ երկրում տռաւել մեծ չափով:

Ընկերակցութիւնները կարող են այդ շահագործումք սանձահարել, չափաւորել, սեպհական խանութներ հիմնելով և մանր միջնորդ վաճառականութիւնը վերացնելով:

Ընկերակցութիւնները կարող են նաև բանւորական աշխատանքը որոշ չափով ազատել շահագործումից, որովհետեւ հնարաւորութիւն ունին գնելու և սպառելու միայն այն դորժարանների արտադրած ապրանքները, որոնք բարեխիղճ չափով վարձաարում են իրանց բանւորներին:

Փոխադարձ օգնութեան այդ ծեր շատ դորժածական է Անգլիայում: Ալգտեղ բանւորական

կաղմակերպութիւնները — տրէդ ունիօնները, սահմանել են այսպէս ասած՝ Cabel—system, որի էութիւնը հետևեալն է. տրէդ ունիօնը ժամանակի համեմատ որոշում է բանւորական օրավարձի չափը և ապա առանձին եարլիկներ է կացնում այն բոլոր ապրանքների վրա, որոնք պատրաստուած են այդ չափով վարձատրուող բանւորների ձեռքով. իսկ սպառող ընկերութիւններից շատերը իրանց կողմից ոյժ են տալիս այդ սիստեմին, գնելով միմիայն այդպիսի եարլիկներով ապրանքներ։ Այդպիսի պայմաններում գործարանները ալլևս չեն կարողանուած ամեն մի նպաստաւոր հանդամանքից օգտուել օրավարձը պակասեցնելու համար։

Ընկերակցութիւնները կարող են կռուել մթերքների կեղծիքի դէմ, որովհետեւ հնարաւորութիւն ունեն սեփական խանութներում ամենալաւ ապրանքներ պահելու և այդպիսով կեղծած մթերքները վաճառանոցից դուրս մղելու։ Իսկ որքան շատ, որքան վնասակար են այդպիսի կեղծիքները։

Դեռ 1862 թ. բաղմաթիւ փաստերով ապացուցուեց, որ Լոնդոնի հացավաճառներից շատերը սովորութիւն էին գարձրել հացի հետ խառնել սապոն, կիր, փայտի թեփ, և այլ նիւթեր։ Իսկ այժմ այդ միջոցը շատ մեծ գործածութիւն է ստացել այն բոլոր տեղերում, որտեղ խիստ հսկողութիւն չկայ. այսպէս օրինակ, մօտ ժամանակներս ֆրանսիայում ձերբակալել էին մի ամբողջ վազոն փայտի թեփ, որ ուղարկուած էր հացավաճառի անունով։

Բայց միայն հացը չէ կեղծիքի ենթարկւողը.

միւս մթերքներն էլ աղատ չեն այդ չարիքից: Շատ անգամ սուրճի փոխարէն լորի կամ դարի են փանառում, երբեմն էլ կաւի հետ խառնուած:

Շատերը շոկոլաղին մանրացրած աղիւս են խառնում:

Գերմանիայում չափազանց էժան դնով (շիշը 40-50 կոպ.) վաճառում են շամպայնի գինի, բայց դա ոչ մի առընչութիւն չունի խսկականի հետ, այլ մի ճարպիկ կեղծիքի արդիւնք է:

Կաթնավաճառներից շատերը իրանց բարի սովորութեամբ միշտ չուր ու կրախմալ են խառնում կաթի հետ:

Շատերը դմակ իւղը հալում ներկում են և խսկական իւղի տեղ վաճառում:

Ահա այդ կեղծիքի դէմ էլ կոռւել կարող են սպառով ընկերութիւններն իրանց օրինակելի խառնութներով:

Ընկերակցութիւնները կարող են ասպարէզից դուրս մղել աւելորդ միջնորդներին, որոնք իրանց դոլութեամբ միայն մի մեծ պլիւս են աւելացնում բոլոր ապրանքների դների վրա: Ապրանքը գործարանից դուրս դալուց յետով՝ ընկնում է նաև խոշոր վաճառականի ձեռքը, տպա միջակ, ապա մանր, և այդ բոլորից յետով հասնում է սպառողին, որի վզին և ծանրանում է աւելորդ ծախսերի ամբողջ գումարը: Ապառով ընկերութիւնը կարող է անմիջական կապ հաստատել գործարանատիրոջ հետ, դրանով ոնչացնել միջնորդ աստիճանները և դգալի էժանութիւն մտցնել դների մէջ:

Ընկերակցութիւնները կարող են ոչնչացնել
քելլամբը—չափաղանց գովաբանութիւնը. ով որ ծա-
նօթ է մեծ քաղաքների, տնտեսապէս զարդացած
երկրների կեանքին, նա անշուշտ կիմանալ թէ
վաճառականները որքան խոշոր գումարներ են ծախ-
սում քելլամի համար—լրագրական յայտարարու-
թիւնների կամ շրջիկ մարդկանց միջոցով։ Կօօպե-
րատիւ ընկերութիւնը կարիք չունի այսպիսի
միջոցի զիմելու, որովհետև նա արդէն ունի իւր
սպառողները, որոնք միաժամանակ շահագրգռուած
սեփականատէրեր են։

Ընկերակցութիւնները զարդացնում են ընկե-
րութեան ոգին, համերաշխութիւնն ու միաբանու-
թիւնը և զրանով մասամբ հարթում նախապատ-
րաստում են այն ուղին, որը տանելու է մարդկանց
գէպի վարդագոյն ասպագան, գէպի այն աշխարհը,
ուր չկայ շահագործում ու բռնութիւն, ուր տիրում
է կատարեալ հաւասարութիւն ու արդարութիւն,
երջանկութիւն և ուրախութիւն։

Այս ընդհանուր տեսութիւնից յետով անցնենք
այժմ իրական փաստերին և տեսնենք, թէ մեր
գիւղական ժողովուրդը ինչպէս կարող է կաղմա-
կերպել ցանկալի ընկերակցութիւններ։

Մեր գիւղացին գարունն ու ամառը աշխա-
տում է, իսկ ամբողջ ձմեռը և մասամբ աշունը
անդորք պառկում և սպասում է առանց արտա-
զրելու։ Շրջապատող պայմաններն ընդհանրապէս

այնպէս են, որ ձմեռնալին պարապմունք չեն մատակարարում գիւղացուն, իսկ նա ալնքան ովք ու պատրաստութիւն չունի, որպէսզի սեփական նախաձեռնութեամբ սահեղծէ եկամտի աղբիւր: Այդպիսի հանգամանքներում որբան էլ բարի լինի մալր բնութիւնը, որբան էլ առատ լինի երկրի բերքը, նա չի կարողանայ բաւարարութիւն տալ ամբողջ տարուայ պէտքերին: Աև կարիքը՝ ձմեռուայ բուք ու բորանի հետ, կանգնում է թշուառ գեղջուկի գրանը: Ի՞նչ անել: Հարկաւոր է հարկերը վճարել— նա դիմում է վաշխառուի օգնութեան, հարկաւոր է տղայ, աղջիկ ամուսնացել— նա դարձեալ նոյն հանապարհն է ընարում: Իսկ վաշխառուն օգտւում է այդ նեղ վիճակից և իր երկաթէ պայմաններն է առաջարկում. պայմաններ, որոնք ալնքան աւերիչ, ալնքան քայլալիչ հետքեր են թողնում: Այդ մասին փաստերը բաղմաթիւ են, նմուշներ ամեն քայլափոխում պատահում են:

— «Աստուած բանն աջողէ Սաքօքեհի, ասում էր ինձ Շիրակի գիւղացիներից մէկը:

— Ի՞նչու, ի՞նչ է արել:

— Եատ մեծ բան, նա ինձ պարտք տուեց թումանին (10 ր.) միայն 20 կոպ.— (ամսական) — շահ և մէկ օրուայ արօրի օգնութիւն պահանջելով» *):

Միամի՞տ, խղճուկ գիւղացի: Նրա կարծիքով դա բարեգործութիւն էր: 10 բռւլուն ամսական 20 կոպ. տոկոս, ուրեմն տարեկան 2 ր. 40 կ. և

*) Տես Մշակ, 1903 թ. № 200.

արօրի մէկ օրավարծ, որ ամենաքիչը 1 ր. 60 կ.
կարելի է հաշուել, ուրիշ խօսքով առաջ՝ 10 բուբլուն
տարեկան 4 ր. տոկոս կամ 100 բուբլուն 40%: Եւ
դա դեռ բարեգործութիւն է համարւում, իրեւ
վաշխառական պահանջի *minimam*: Կան աւելի սոս-
կալի փաստեր, երբ տոկոսը 100 ու նոյն իսկ 200
տոկոսի է հասնում: Դժբախտաբար, տնտեսական այդ
չարիքը միայն կանխիկ դրամի փոխառութեան
շնորհիւ չէ արտայալտւում, այլ և սերմացուի, յարդի
և առհասարակ նիւթեղէնի փոխառութեամբ: Գիւ-
ղում դրեթէ ընդհանուր սովորութիւն է դարձել
հարկ եղած դէպքում 1 քթոց յարդ փոխ վերցնել
2 քթոց վերադարձնելու պայմանով, ուրեմն վեց
ամսուայ ընթացքում՝ կրկնակի, ալսինքն տարեկան
200%: Գրեթէ նոյն ձեռվ է կատարւում և հացա-
հատիկների փոխառութիւնը. սովորաբար վերցնում
են 1 սոմար (18 պուդ) և վերադարձնում $1\frac{1}{2}$:
Գիւղական խանութպանն էլ յետ չէ մնում այդ
ընդհանուր հոսանքից: Նա իր վաճառած ապրանքից
ամենաքիչը 25-50% օգտատ է ստանում, իսկ շատ
անդամ «նիսեա» տուած տալրանքի համար էլ
առանձին տոկոս է հաշւում:

Ի՞նչ անէ այդպիսի պայմաններում ապրող
գիւղացին: Նա աշխատում է, արեւն քրտինք է
թափում, բայց արգիւնքն ուրիշն է վայելում: Կալոցը
վերջանալուն պէս գալիս է հարկահանը և իր հարկը
պահանջում, պարտատէրը՝ պարտը, խանութպանն՝
իր բաժինը, պահապանն՝ իր վարձը: Եւ վերջը

զիւղացին տմբարում է չնչին մնացորդը, միամիտ
բարեպաշտութեամբ մրժնչալով.

—Աստուած ողորմած է, նա իմ ընտանիքի
բաժինը կուղարկէ:

Սակայն, ինչպէս յալտնի է, հրաշքների գարը
վաղուց է անցնել: Բարեպաշտ գեղջուկի սպասելիքը
չէ արդարանում և նա դեռ ձմեռուայ կէսին նորից
դիմում է փոխառութեան, նորից կրկնում է նոյն
խաղը և այդպէս անվերջ: Էլ որտեղից նա մտածէ
կուլտուրալի և կատարելագործութեան մասին:

Այսպէս ուրեմն, ամփոփելով բոլոր ասածները,
դալիս ենք այն եզրակացութեան, որ մեր երկիրը
բարեթեր է և հարուստ, բայց ազգաբնակութիւնը
տղէտ է ու կուլտուրապէս յետամնաց: Նա չի կա-
րողանում շահադործել իւր անխնամ ընկած հարրա-
տութիւնները, չէ կատարելագործում մշակութեան
տեխնիկան, չարքաշ կեանք է վարում և շատ
յանախ կարիքից ստիպուած վաշխառուական շա-
հագործումների ենթարկում:

Ի՞նչ անել ուրեմն, ինչով դարմանել ժողովր-
դական ալդ ցաւը, ինչով վերացնել կոմ գոնէ
մեղմացնել տնտեսական ալդ չարիքը:

Ուրիշից փրկութիւն սպասելն անօպուտ է,
կողմնակի բարեգործութեան վրա յոյս զնելն ապար-
դիւն: Տնտեսական—սոցիալական չարիքները խօսքով
ու բարի ցանկութեամբ չեն վերացւում, այլ կեն-
դանի դործով: Անհրաժեշտ է ուրեմն ինքնագոր-
ծունէութիւն ու ինքնօդնութիւն՝ համաշխատակ-
ցութեան վրա հիմնուած: Ինչ որ անդօր է անել

մէկը, կարող է անել այդ մէկերից կազմուած միութիւնը. ինչ որ գժուար ու անմատչելի է զիւղական մի ընտանիքի համար, մատչելի կդառնայ ամբողջ զիւղին, եթէ նա միացած լինի, եթէ նպատակայարմար կազմակերպութիւններ ունենալ: Զէ որ անձրեփ կաթիւններն էլ շատ շնչին ոլժ են ներկայացնում առանձին-առանձին վերցրած, բայց երբ միանում են՝ առուներ են կազմում, առուները՝ զետերը, զետերը՝ հեղեղներ: Կարելի է հասարակական անշատ ոյժերից էլ այդպիսի հոսանքներ առաջացնել, եթէ նրանց համաշխատակցութեան օղակով միացնենք:

Երբ մարդ նանապարհորդում է Եւրոպայի քաղաքակիրթ երկրներում, երբ տեսնում է զարդացած կուլտուրայի արդիւնքները, աղքաբնակութեան բարեբաստիկ կենցազը և աչքի առաջ է քաշում մեր մութ ու մռայլ իրականութիւնը, այն ժամանակ ակամայից մի բացականչութիւն է դուրս թռչում.

— Ինչու մեղանում էլ այդպիս չէ. ինչու մեր ժողովուրդն էլ չի հետեւում Եւրոպացիների զեղեցիկ օրինակին:

— Այսր մենք ոլժ չունենք, դուցէ պատասխանեն շատերը. ի՞նչպէս հետեւենք այդպիսի օրինակների, ի՞նչպէս ստեղծենք ցանկալի կազմակերպութիւններ:

Բայց միթէ դա արդարանալու պատճառ է: Ոչ մի բարիք առանց գժուարութեան և զոհաբերութեան չէ առաջ գալիս: Ոչ մի տեղ հասարակական հիմնարկութիւնները չանկարծակի, կախար-

դական գաւաղանի շնորհիւ չեն գոյութիւն ստանում։ Դրանք բոլորն էլ հաստատում են կամաց կամաց, ժամանակի ընթացքում, անվերջ շանքերի շնորհիւ։ Եւրոպակի շատ և շատ զիւղերում կան սպառող ընկերակցութիւններ, փոխատու-խնայողական, ինքնօգնութեան ու այլ օգտակար ընկերութիւններ, Փիղիքական ու բարոյական դաստիարակութեան համախմբումներ։ Ի՞նչ էք կարծում, ով է եղել այդ բոլորին ծնունդ տուողը։ Պետութիւնը, բարեգործները։

— Քաւ լիցի. գրեթէ ամեն տեղ ժողովուրդն է եղել զլխաւոր նախաձեռնողն ու զեկավարողը։ Պետութեան ու բարեգործութեան զերը միայն բացառիկ դէպքերում է արտայալտուել։ Անցնենք փաստերին։

1884 թուականին ֆրանսիական կառավարութիւնը մի օրէնք է հրատարակում, թէ երկրագործները կարող են սինդիկատներ՝ ընկերութիւններ կազմակերպել և խոկոյն այդ օրէնքը իրականութիւն է դառնում։ Այդպիսի ընկերութեան առաջին օրինակը զնում է Դեղի անունով մի մարդ, ապա կոմս Ռոկինից, Տրեգէօր դը լա Բօկ և այլն։ Կարճ ժամանակում այդ ընկերութիւնների ցանցը ժամկում է ամբողջ ֆրանսիան։ ամեն տեղ էլ ինքը ժողովուրդն է զործի զլուխ անցնում։ Եւ որքան մեծ բարիքներ են հասցըել այդ ընկերութիւնները ֆրանսիացի գիւղացիներին։

Նախքան այդ ընկերութիւնների հաստատուելը, շատ շատերն էին խօսում, թէ կարելի է հողը

արհեստական կերպով պարարտացնել, թէ կարելի է աւելի կատարելագործուած մեքենաներ ձեռք բերել, բայց միայն չափազանց սակաւաթիւ ընտրեալներն էին խօսքից դէպի գործն անցնում: Մեծամասնութեան համար այդ բոլորը մնում էր միայն բարի ցանկութիւն, անմատչելի մի բարիք: Բայց երբ աբդալիսի առանձին ընտանիքները միանում, ընկերութիւններ են կազմում, այն ժամանակ գործը իսկոյն հեշտանում է, զիտութեան և տեխնիկայի արդիւնքները բոլորի համար մատչելի դառնում: Գիւղերում սկսում է մի տենգային կեանք, զեղեցիկ օրինակը համաճարակ հիւանդութեան նման տարածւում է ամեն կողմ: Հոգը արհեստական ձեռվ պարարտացնելը, մշակութեան տեխնիկան կատարելագործելը, արդիւնաբերած պատուղները շահեկան կերպով վաճառահանելը—այդ բոլորը հեշտութեամբ իրագործւող մի բան է դառնում: Ինչու, որովհետեւ անշատուած ոյժերը միանում են ընդհանուր կազմակերպութեան օղակով: Երկրագործական ընկերութիւնների երեան գալուց յետով, ասում է տընտեսագէտ Բանսել, Ֆրանսիայում քիմիական միջոցներով արտեր պարարտացնելը երկու անգամ աւելի ծաւալ ստացաւ, քան առաջ: Այդ միենոյն ընկերութիւնների շնորհիւն էր, որ վաճառականները պարարտացնող նիւթերի զինք 50⁰/₀ պակասացը ին:

Ներկայումս էլ Ֆրանսիայի զիսաւոր վայրերում կան այդ ընկերութիւններից: Նրանք ունեն սեփական թերթեր, հրատարակում են հրահանդիչ պրըուկներ, մասնագէտ դեկավարների միջոցով բա-

ցատրում, հասկացնում են դիւղացիներին հովի մշակութեան ու արդիւնաբերութեան անհասկանալի կողմերը, ցոյց են տալիս, թէ հովը պարարտացնելու համար ինչքան և ի՞նչ նիւթեր են հարկաւոր, ինչ մերենաներ, ինչպիսի սերմացուն է ձեռնտու և այլն։ Բայց այդ գեռ բոլորը չէ։ Ընկերութիւնը իր երաշխաւորութեամբ զնում և տալիս է իր անդամներին ամեն հարկաւոր նիւթեր ու պիտոյքներ։ Նա ունի իւր սեպհական խանութը, պահեստը, ամբարը, խնալողական գանձարանը։ Այդ բոլորի շնորհիւ ընկերութեան անդամը ազատում է միանգամայն վաշխառուի ճանկերից, հեռու է մնում կողմնակի խանութպահների խարդախութիւնից ու շահագործումից։ Ամեն մի նեղ բոպէում նա զիմում է ընկերութեանը և ստանում է բաւարարութիւն։ Ընկերութիւնը իր անդամների բոլոր հարկաւոր պիտոյքները զնում է դումարով, անմիջական աղբիւրից, աւելի էժան ու ձեռնտու պայմաններով։

Երկրագործական ընկերութիւնները իրանց անդամներին այզգքան դիւրութիւն տալուց յետոյ գեռ որոշ օգուտ էլ են ստանում, որը բաժանում են անդամների վրայ՝ մասնակցութեան աստիճանի տոկոսով։

Փրանսիայի երկրագործական ընկերութիւնները ժամանակի ընթացքում շաղկապուել են իրար հետ և մի ընդհանուր կեդրոն առաջացրել, որ գտնում է Պարիզում և «կենտրոնական ընկերութիւն» անունն է կրում։ Բացի գրանից կան և նահանգական կենտ-

ըռնական ընկերութիւններ։ Դրանց բոլորի հետ
կապուած են մոտ 900 առանձին ընկերութիւններ։

Բայց միայն ֆրանսիան չէ, որ կարող է պար-
ծենալ այդպիսի գեղեցիկ կազմակերպութիւններով։
Եւրոպայի միւս երկրներում էլ՝ Գերմանիայում,
Անգլիայում, Բելգիայում, Հոլլանդիայում, Շուեցա-
րիայում, Իտալիայում ու Աւստրալիայում, կան
նոյնանման բազմաթիւ ընկերութիւններ։ Ամեն
տեղ հիմնական սկզբունքը նոյնն է — համաշխատակ-
ցութիւն և փոխադարձ օգնութիւն, թէև նա երբեմն
տարբեր վարիացիաներով է ձեւակերպւում տեղի
ու սոցիալական պայմանների համեմատ։

Գերմանիայում դեռ ֆրանսիայից առաջ սկսել
էր կազմակերպուել աշխատաւոր տարրը։ Այդտեղ
հոչակաւոր Շուեցայի ջանքերն ու արծարծած
գաղափարները բաւական շօշափելի արդիւնքներ
էին տուել, առաջացնելով բազմաթիւ ընկերակցու-
թիւններ։ Եւ ահա ֆրանսիայի ազգու օրինակը
աւելի մեծ զարկ է տալիս այդ հոսանքին, տարեց-
տարի աւելի ու աւելի մեծացնելով զիւղացիական
կազմակերպութիւնների թիւը, որ հասել է 1859

1859 թ.-ին — 67-ի. 1870-ին — 164-ի.

1880-ին — 360-ի. 1891-ին — 1442-ի.

1892-ին — 1294-ի. 1896-ին — 1397-ի։

Անգլիան թէև իր աշխարհագրական ու երկ-
րաբանական առանձայտակութիւններով զիւսաւորա-
պէս արդիւնագործական երկիր է ներկայացնում,
բայց այնուամենանիւ ալդտեղ էլ բուն են դրել
բաւական թուով երկրագործական ընկերութիւններ,

որոնցից ամենահինն ու ամենանշանաւորը Դեպֆօրտի
ընկերութիւնն է (հիմնուած 1868 թ.): Դա ոչ
միայն կատարում է ֆրանսիական ընկերութիւնների
ծրագրած բոլոր փունկցիաները, այլև իր սեփական
գործարանն ունի, որտեղ պատրաստում են հող
պարարտացնելու նիւթեղէններ ու դորժիքներ: Նրա
անդամների թիւը գեռ 1892 թուին հասնում էր
3057-ի, իսկ դրամագլուխը մօտ կէս միլիոն ֆրանկի:

Այժմ համառօտակակի լիշենք, թէ երկրագործական
համաշխատակցող ընկերութիւնները որքան մեծ օ-
գուտներ են հասցնում իրանց անդամներին լատկապէս
իրքեւ արդիւնաբերող ու վաճառահանող մարմիններ:

Ինչպէս ասում է Պ. Ե. Թոփչեանը, Եւրոպայում
երկրագործական ընկերութիւնները հոգանաւորի
գեր են խաղում իրանց անդամների վերաբերմանք:
Նրանք ամեն կերպ նպաստում են դիւղացիներին
նախ արդիւնաբերական և ապա վաճառականական
դորժունէութեան մէջ: Այսպէս օրինակ, մի քանի
ընկերութիւններ ունեն սեփական խանութներ,
որտեղ վաճառում են հարկաւոր առարկաներ՝ լատ-
կապէս իրանց անդամներին: Ուրիշ ընկերութիւն-
ները վաճառում են ոչ միայն անդամներին, այլև
կողմնակի մարդկանց, միայն այն աարբ! ըութեամբ,
որ առաջինները օգտում են որոշ դիջումով ու
արտօնութիւններով, իսկ երկրորդները զնում են
սովորական վաճառականական շուկայի պայման-
ներով: Այսպէս է ֆրանսիայի ներքին նարանապէս

ընկերութիւնը, որ ունի 30 բաժանմունքներ և 12000 անդամներ:

Դէ Սալիանսի ընկերութիւնը ի միջի այլոց անասունների առևտրով է զբաղւում և կարողանում է սովորականից գրեթէ $30^{\circ}/\text{o}$ էժան ծախել, որ մի մեծ բարիք է աղգաբնակութեան համար:

Բացի տեղական գործունէութիւնից՝ երկրագործական ընկերութիւնները հիանալի կերպով կաղմակերպում են և արտահանութեան գործը: Իրանց բերքերը ծախելու ժամանակ ընկերութեան անդամները երբէք հարպիկ «հաւաքագնողի» (СКУПЩИКЪ) —շահագործութեանը չեն ենթարկւում: Նրանք ըուլոր նիւթերը յանձնում են ընկերութեանը, որը ուղարկում է համապատասխան շուկաները, վաճառում է ամենածեռնոնտու պայմաններով և սպասացած գումարը բաժանում ապրանքատէրերին:

Կարծում ենք, որ առանց բացատրութեան էլ հասկանալի են այդպիսի գործունէութեան առաւելութիւնները՝ աշխատաւոր ոլժերի և ժամանակի խնայողութիւն, շահաւետութեան հետ միասին:

Մինչև այժմ մենք յիշեցինք համաշխատակցող դիւղական ընկերութիւնների երեք զլխաւոր ֆունկցիաները — երկրագործական աշխատանքների ղեկավարութիւն, հարկաւոր գիտելիքների և նիւթերի մատակարարութիւն և ստացուած բերքի շահաւետ վաճառահանութիւն: Բայց կայ և չորրորդը, որ պակաս նշանաւոր չէ: Այդ ընկերութիւնները պարագաներ են ստեղծում իրանց անդամների համար, որով և զգալի չափով նպաստում են գիւղատնակ-

սական արդիւնազործութեան զարգացմանը: Դիմենք
դարձեալ փաստերին:

Գերմանիայի շատ զիւղերում կան կրախմալի
զործարաններ, որոնց հիմքը չիշեալ ընկերութիւն-
ներն են դրել: Դիւղացինները գարունն ու ամառը
պարապում են իրանց սովորական զործերով, իսկ
տարուայ մնացած ժամանակը աշխատում են գոր-
ծարանում, հացահատիկներից կրախմալ են պատ-
րաստում և վաճառահանում:

Շատ տեղերում էլ այդ ընկերութիւնները բե-
րել են տուել կաթնատնտեսական ու զինկզործա-
կան օրինակելի մեքենաներ, որոնց շնորհիւ զիւղա-
ցինները հնարաւորութիւն են ստացել սեփական
ձեռքերով և խելացի ձեռով մշակելու իրանց արդիւ-
նաբերած պառազները և վաճառահանելու օգտակար
պայմաններով: Այդպիսով նրանք կարողանում են
մրցել նոյն իսկ խոշոր կապիտալիստների դէմ, որ
շատ մեծ նշանակութիւն ունի ներկայ տնտեսական
կեանքում:

Ընթերցողներից շատերը գուցէ կարծեն, թէ
դա մի շատ բարդ ու զժուարին զործ է: Բայց
սխալ է այդպիսի կարծիքը. այստեղ ոչ մի զժուա-
րութիւն և բարզութիւն չկայ. ամեն ինչ կատար-
ւում է պարզ ու հասարակ ձեռով: Ահա մի փոքրիկ
զիւղ, որ ունի համաշխատակցող ընկերութիւն:
Այդ ընկերութիւնը հիմնում է կաթնատնտեսարան,
հրաւիրում է մասնագէտ վարպետ: Իւրաքանչիւր
առաւօա զիւղացինները կժում են իրանց կովերին
ու ոչխարներին և կաթը բերում, քաշով յանձնում

կաթնատեսարանին։ Վերջինս հաւաքած կաթից պատրաստում է զանազան խւղեր ու սպանիրներ, արտահանում, վաճառում է և համապատասխան ծախսերը դուրս զալուց յետով, զուտ արդիւնքը բաժանում է կաթ մատակարարողներին՝ կաթի քանակի համեմատ։

Նոյն ձեռվ փոխանակութիւն կատարւում է նաև զինեղործութեան և առհասարակ արդիւնագործութեան միւս նիւղերի վերաբերմամբ։ Պարզ է, թէ որքան օգտակար հետեւանքներ է առաջացնում այդպիսի համաշխատակցութիւնը։ Եւ հէնց այդ օգտակարութիւնն է պատճառը, որ բաղաքակիրթ երկրներում այնքան բազմանում ու բարդաւանում էն համաշխատակցող ընկերութիւնները, շարունակ նորանոր ֆունկցիաներ բացանելով նրանց առաջ իրեւ ապացուց բաւական է լիշել փոքրիկ Դանիայի օրինակը։ Ինչպէս յախանի է այդ փոքրիկ երկիրը հոչակուած է իր երկրագործութեամբ ու կաթնատնտեսութեամբ, որոնց արդիւնքներից մեծ քանակութեամբ արտահանուում է հեռաւոր երկրներ։ Այդանեղ 1883-ին կար միայն 1 կաթնատնտեսուկան համաշխատակցող ընկերութիւն, իսկ երբ առաջին օրինակի օգուտներն ակներեւ գարծան, այն ժամանակ ընկերութիւնները հետզհետէ բաղմացան և 1898-ին արդէն 1700-ի էին հասնում։ Այդ ընկերութիւնները հիմնում են սեպհական պահեստներ՝ իւղի, պանրի ու ձուի համար և մշակում են արտահանութեան հեշտ ու օգտակար ձեռքու Այլպիսով Դանիայի արտաքին վաճառականութիւնը որոշ կենցանութիւն է ստանում և տարէցտարի առաջա-

զիմում: Գերմանական «Die neue Zeit» շաբաթաթերթի ասելով (1901թ.), Դանիան 1883-ին արտահանել է չէպի Անդիխա 4^{1/2} միլ. պուղ իւղ, 1895 թ.—35 միլ. պուղ, իսկ 1900 թ.—42 միլիօն պուղ: Թուերը բաւական պերճախօս են և փաստը բացարութեան կարօտ չէ:

Կաթնատնտեսական համաշխատակցող լնկերութիւնները բաւական բազմաթիւ են նաև Ամերիկայի Միացեալ նահանգներում, Բելգիայում, Հոլլանդիայում, Զուիցերիայում և ուրիշ երկրներում: Տնտեսագէտ Բանսել հաշուել է, որ միայն փոքրիկ Բելգիայում մի տարուայ լնթացքում—(1897 թ.) հիմնուել են 80 լնկերութիւններ համաշխատակցութեան սկզբունքով:

Գերմանիայում միայն կաթնատնտեսական, զինեզրծական և անասնապահական և համաշխատակցող լնկերութիւնների թիւը աճել է հետեւալ կարգով.

1870-ին 1 լնկերութիւն, 1880-ին 70.

1891-ին—1087, 1892-ին—1196,

1896-ին—1644, 1900-ին—2571.

Անդիխի փոքրիկ մասնիկը՝ իրանդիան, տարէցտարի մեծացրել է կաթնատնտեսական համաշխատակցող լնկերութիւնների թիւը, որ հասել է.

1891-ին—17, 1892-ին—25,

1893-ին—30, 1894-ին—33,

1895-ին—67, 1896-ին—110,

1897-ին—180:

Ի՞նչ են ցույց տալիս առաջ բերած թուերն ու փաստերը: Միթէ նրանք պերճախօս ապացուց չեն,

որ համաշխատակցութիւնը տնտեսական մի օգտակար գործօն, է որից այնքան խելացի կերպով օգտւում են մեղանից աւելի քաղաքակիրթ ու զարդացած ազգերը:

Այս, համաշխատակցող ընկերութիւնները շատ մեծ զեր կարող են խաղալ ընդհանրապէս տնտեսական կեանքում և մասնաւորապէս զիւղերում: Նրանք իբրև հովանաւորող՝ միշտ կարող են օգնութեան ձեռք կարկառել անզօրին, անպաշտպանին, կարող են ոտքի կանգնեցնել տնտեսապէս ընկածին, հարստահարուածին: Եւրոպական կեանքի զրական օրինակները բազմաթիւ են և պերճախօս. մնում է ուրեմն հետեւել զրանց, չիշելով Սմալսի այն խօսքերը, թէ «լաւ օրինակին հետեւելը մեծ առաքինութիւններից մէկն է», թէ «ինքնօղնութիւնը հրաշըներ կարող է զործել».

— Հետեւենք, զուցէ բացականչեն ընթերցողները, բայց ի՞նչպէս, չէ՞ որ Կովկասը Եւրոպա չէ, հայ զիւղացին եւրոպացի չէ, նա ճնշուած ու հարստահարուած է, նրա հարկերը շատ ծանր են, պարաքերը շատ:

Ճիշտ է, բայց ոչ իրաւացի դիտողութիւն: Խեղճութիւնը երբէք իրաւունք չէ տալիս մարդկանց, ձեռքերը ծալած նստելու: Ներկայ տնտեսական պայմաններում ոչ մանանալ է թափուում և ոչ հրաշը կատարուում: Միայն մարդկալին աշխատանքն է բոլոր բարիքների ստեղծողը, միայն խելքն ու զիտակցութիւնն է այդ աշխատանքին կանոնաւոր ուղղութիւն ու կազմակերպութիւն տուողը:

Դործի աջողութեան տեսակէաից անհրաժեշտ
է սկզբում մեծ ու լայն ծրագրներից խոյս տալ, որ
յետոյ հիասթափում առաջ չդայ: Օրինակ, բոււական
է հիմնել միայն սպառողական ընկերութիւն, որ
չափազանց հեշտութեամբ կարելի է կազմակերպել,
մանաւանդ այժմ:

Դրա համար ձեռնհաս մարդիկ պէտք է ժո-
ղովներ գումարեն իրանց դիւզերում, բացատրեն ժո-
ղովրդին հարցի էութիւնը, կազմեն մասնակցել ցան-
կացողների ցուցակը, ընտրեն գործի հաւաքարիծ
զեկավարներ, մասնակցողներից հաւաքեն իւրաքան-
չիւրի ոլժին համապատասխանող բաժնեզումարը
և այդ ընդհանուր գումարով բաց անեն սեփական
խանութ: Այդ խանութի նպատակը պէտք է լինի
էժան գնով լաւ ապրանքներ—ուտելիք, հագնելիք,
վառելիք և այլ անհրաժեշտ նիւթեր մատակարարել
իր անդամներին և վերջը զուտ արդիւնքն էլ բա-
ժանել անդամների բաժնեզումարի համեմատ:

Կրկնում ենք՝ ոչ մի գժուարութիւն, ոչ մի
արգելք չկայ այդպիսի կազմակերպութիւնների դէմ:
Նոյն խոկ կառավարութիւնն ինքը նպաստում է այդ
հոսանքին: Սակայն գործը աւելի հեշտացնելու և
շատապեցնելու համար կարելի է օգտուել արգեն գոյու-
թիւն ունեցող կանոնազրութիւնից: Խոկ յետոյ, ժա-
մանակի ու փորձի պահանջների համեմատ կարելի
է ընդարձակել կանոնազրութիւնը և լայնացնել
ընկերութեան գործունէութիւնը:

Թող ուրեմն օր առաջ ասպարէղ մտնեն ձեռըն-
հաս մարդիկ, թող եռանդ ցոլց տայ ինքը ժողովուրդը,

որպէսզի մեր զիւղերում էլ ծնունդ ստանան այդ օգտակար կազմակերպութիւնները, որպէսզի խրդնուկ զիւղացին հալ ու մաշ չլինի չքաւորութեան ճանկերում և ակամալից չնեռանալ տուն ու վաթանից, բազաքների գործարաններում բազդ որոնելու համար, և չը կարուէ իրեն կեանք տուող հողից:

Հողը, հողը կառողացնէ մեղ ամեն կողմից:

Ի միջի ալոց, հիմա մեղ հարկաւոր են մեր զիւղերում 10-15 հատ հիւանդանոց, որոնցից ամեն մէկը մեղ վրա կը նսաի մօտ 15,000 բուրլի. և այդքանը մենք կարող ենք ու միանդամալն պարտաւոր ենք անել:

Դա կ'ունենալ մեծ կուլտուրական նշանակութիւն. պէտք է միայն սկզբնական օդնութիւնը, նախաձեռնութիւնը, և ապա զիւղացիներն իրենք կը պահպանեն:

Ահա մի նոր ազատ ասպարէդ լայն բարեգործութեան համար:

Մեր կառավարութիւնն այնքան շատ գործ ունի, որ բոլորին միանդամից և ամեն բանի չի կարող վերահասու լինել: Կրկնում ենք, ահա ծեղ մի նոր ասպարէդ՝ լինելիք կտակների համար: Եւ պարզ է, որ ամեն մի լաւ գործ կրկնակի զին ունի, եթէ այդ անում են մարդիկ իրենց կենդանութեանը:

Այսպէս թէ այնպէս, հիւանդանոցներ և 4-գասեան զիւղատնտեսական և տեխնիկական դպրոցներն անհրաժեշտ պահանջներ են հիմա:

Երկու խօսք ևս—պէտք է յանախակի կրկնել նշմարտութիւնը: Այն զործարանները, որ կան մեզանում, բոլորովին չեն համապատասխանում իրանց կոչման աշխատողների բարեկեցութեան վերաբերմամբ:

Բանւոր գասակարգի համար նրանք ոչինչ չեն անում. նրանց ամենաանհրաժեշտ պիտուքները բաւականութիւն չեն գտնում:

Սրանց թւում գտնւում է 8-10 ժամեայ օրական աշխատանքը. բանւորների պարտականացուցիչ ապահովագրութիւնը, որ կառավարութիւնն ինքն է առաջարկում. փոխադարձ օդնութեան ընկերութիւնները, համաշխատակցութիւն — կօպերատիւդործունէութիւնը, ծերութեան թոշակները, խնայողական արկղերը, ծրի պիտանի գրագարանները, ծրի բազանիքները, տաք կերակուր, առողջապահական էժանազին ընակարաններ և այնպիսի աշխատանքի վարձ, որ ամեն մի բանւոր բնականաբար զգայ, որ ինքն ևս, զոնէ մասամբ, զործարանի փոքրիկ տէրերից մէկն է, ևայլն ևայլն:

Ամենին յալտնի փաստ է, որ արգիւնաբերութեան առաջադիմութիւնը և բերքերի բանակութիւնը մասամբ կախումն ունի նրանից, թէ կաղմակերպուած են և թէ ի՞նչպէս են կազմակերպուած բանւորները:

Կաղմակերպութիւնը, որ բանւորին կուշտ, առողջ, հմուտ և հոգով ժիր է պահում, բարի աղցեցութիւն է անում նորա զործունէութեան արդիւնաւէառութեան վրա: Անտարակոյս, հասարակութեան իրաւունք տալ կաղմակերպել աղատ կեր-

պով ընկերութիւններ՝ որոնց նպատակն է բարձրացնել իրանց անդամների նիւթական զրութիւնը, մեղ մօտ ևս կարող է հանդիսանալ իրրե հզօր զարկ յառաջադիմութեան և երկրի արդիւնաբեր ոլժերի զարգացման, և այլպիսով թուլացնել առաջ զնացող ազգատութեան ընթացքը:

Ի՞նչ են մեր զործարանատերերի և խոշոր վաճառականների սինտիկատները, սինտիկատներ, որոնք ոչ մի ընդդիմապրութիւն չեն գանում բանւորների սկրոֆեսիոնալ կաղմակերպութիւնից, եթէ ոչ այնպիսի դաշնակցութիւններ, որոնց նպատակն է յափրշտակել ժողովուրդի զրապանը:

Այս բոլորը մեղ պակասում է. զժբախտաբար բանւորների միայն մի տոկոսը զրադէտ է: Մենք չունինք մեր հասարակութեան ստուար խաւերում կարգմակերպութիւններ, չկայ նաև մշակուած հողալինդ կացեր զոնէ հողի վերաբ:

Անցեալ տարի մտադրուեցին Բերլինում այսուհետ առած՝ «Ճայկական ցուցահանդես» կազմելու, ուր պիտի ցուցադրուեր այն ամենն, ինչ որ հայերի ձեռքով շինուել ու նրանց մտքի ստեղծագործութիւնն էր, և, ինձ թւում է, առհասարակ այն ամենն, ինչ որ ցոյց պիտի տար եւրոպական կուտուրայի իւրացումն հայերի կողմից. այսինքն ինչպէս են ըմբռնում հայերը եւրոպական քաղաքակրթութեան ողին ու ինչպէս և ինչ ձեռք են արտայալառում իրականութեան մէջ. ուրիշ խօսքով ասած՝ ինչպէս և ինչ ձեռք են հայերը իրենց լուման ձգում ընդհանուր մարդկութեան աշխատանքի գանձանակը:

Տարակոյս չկայ, որ մեր ֆարբիկանաներն ու նաւթարդիւնազործները պէտք է ընդհանուրի գատաստանին ներկայացնեին իրենց զործն ու աշխատանքը։ Արդ, խղնով ասէք, ինչ ձեռով պիտի ներկայացնեին մեր բանւորների կեանքն ու կենցաղը։ հարկաւ, եւրոպացիները միածայն պիտի զարժանալին՝ մեղմ խօսքով արտայալտած՝ մեր անկուլտուրականութեան վրա։

Ֆարբիկաների ու գործարանների բանւորների դրութիւնը հասցըէք հարկաւոր բարձրութեանը, թող գարծեալ գիւղերի աւելորդ աղջաբնակութիւնը քաղաքն երթայ, որ հաւասարակշռէ իր տնտեսական պայմանները։ Այժմ Անզիիայում արդէն նկատում է, որ գործարանական քաղաքներից՝ ուր գործը դրուած է համարեա իդէալական կերպով, բանւորների մեծ բազմութիւն լետ է զնում գիւղը...

Ծուլութեամբ առաջ չենք զնալ. պէտք է վերածնուի թէ գիւղը և թէ քաղաքը. պէտք է աշխատանք. լացով և ողբալով մենք աւելի ու աւելի կոչնչանանք, և միայն խելացի աշխատանքը, փոխադարձ սէրը և ժամանակի ողին ըմբռնելը մեզ կփրկեն։ Թող անէ ամեն մարդ ինչ որ կարող է. Եսամոլութեան մէջ չկայ ոչ երջանկութիւն և ոչ էլ սէր, այլ անողոք ու վաղաժամ այլասեռումն ու մահ։

